

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

1500 L.Ո. 76ԳԻ ՏԱՐԻ, ԹԻԻ 44 (21387) ԶՈՐԵՔՇԱՐԹԻ, 30 ԱՊՐԵԼ 2003 10 ԷՁ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ
ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԹԵՒ ԱՒԻԻ ՄԷՉ
Այսօր առաւօտեան ժամը երկուրէն, անձնասպանական գործողութիւն մը տեղի ունեցաւ Թէյ Ալիի մէջ, ամերիկեան դեսպանատան մօտ գտնուող սրճարանի մը մէջ, իսկ ընդ 3 րոպէս եւ 30 վիրասիր:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐԸ ՅԱՏԿԱՆՇՈՒԹԵՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ՆԵՍԻՊ ԼԱՀՈՒՏԻ ԵԼՈՅԹՆԵՐՈՎ. ԱՌԱՋԻՆԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ ՍՈՒՐԻՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԹԵՐ, ԵՐԿՐՈՐԴԸ՝ ԴԵՄ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐՈՎ

Խորհրդարանը երէկ սկսաւ երկօրեայ իր լիազուարէն նիստերուն, որոնք կ'աւարտին այսօր՝ վաւերացնելու համար կառավարութեան նոր կազմին աշխատանքային ծրագիրը:
Վարչապետ Ռաֆիք Հարիրի կառավարութեան անունով ներկայացուց ծրագիրը խորհրդարանին, վաւերացում պահանջելով:
Վարչապետ Հարիրի շեշտեց, որ կառավարութիւնը կառչած կը մնայ Լիբանանի մէջ միջազգային օրէնքներու եւ բանաձեւերու գործադրութեան, յատկապէս անոնք, որոնք առնչուած են Միջին Արեւելքի մէջ անբողջական եւ արդար խաղաղութեան գործադրութեան:
Վարչապետ Հարիրի նշեց, որ Լիբանան կը շեշտէ եւ կը պահանջէ, որ միջազգային բոլոր տագնապետները լուծուին ՄԱԿի օրէնքներուն շրջագծէն ներս եւ Միջին Արեւելքը դառնայ հաւաքական քանդուածի վէտերէ դատարկուած շրջանի մը:

Շար.ը՝ էջ 2

ՊԱՂԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՊՊԱՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԵՅՈՒՅ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԽՕՍԵՑԱԻ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՃԱՌ ՄԸ, ՈՐ ՍԱԿԱՅՆ ԱՆՄԻՉԱՊԵՍ ԲԱԽԵՑԱԻ ՀԱՄԱՍԻ ԸՆԴՂԻՄՈՒԹԵԱՆ



Քաղաքական հետաքրքրական ճառով մը՝ պաղեստինեան իշխանութեան նշանակեալ վարչապետ Մահմուտ Ապպաս երէկ խորհրդարանին ներկայացուց նոր կառավարութիւնն ու անոր ուղեգիծը՝ ապահովելու համար երեսփոխաններուն քուէները:
Խորհրդարանին ուղղած իր ճառով Ապպաս խոստացաւ ընդառաջել ծայրայեղական շարժումները սանձելու իսրայէլեան պահանջին: Ան խոստացաւ նաեւ հաւաքել ապօրինի զէնքերը, ինչպէս նաեւ՝ պայքարել փտածութեան դէմ: Ապպաս սակայն շեշտեց, որ Իսրայէլ իր կարգին պէտք է առնէ մեծ ու անհրաժեշտ նկատուող քայլեր, որոնք կարգին՝ հրէական բնակեցման վայրերու քանդումն ու հաւանութիւնը՝ ամերիկեան հովանաւորութիւնը վայելող խաղաղութեան ծրագրի մը կ'իրարկման գծով:
Ապպաս ըսաւ, որ զէնքերու քանակը եւ անօրէն իրավիճակին վերջ տալու ծրագիրը պիտի դառնայ կառավարութեան գլխաւոր պարտականութիւններէն մէկը: Ան աւելցուց, որ միայն ապահովութեան ուժերը իրաւունք պիտի ունենան զէնք կրելու: Ապպաս ըսաւ նաեւ, որ կառավարութիւնը իր ուղղութիւնը պիտի կեդրոնացնէ պաղեստինցի քաղաքացիներուն ու անոնց հարցերին ապահովութիւնը երաշխաւորելու հարցին վրայ:

Շար.ը՝ էջ 9

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ ԽԱՐԱԶԻ ԱՅՍՈՐ ԿԸ ՏԵՍԱԿՑԻ ԲՈՉԱՐԵԱՆԻ ՇԵՏ

Իրանի արքային գործոց նախարար Բամալ Խարազի յաշտութեան միջոցով այցելութեան մը համար երէկ հասաւ Նայասպան, այցելելէ ետք Ազդէնիան եւ Վրաստան:
«Արմենիա» միջազգային օրակայանին մէջ լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին Խարազի վերահասարակաց Գարուի մէջ կարարած իր այն յայտարարութիւնը, թէ Թեհրան յայտարար է միջուկային զէնքի ստանձնելու Լեռնային Ղարաբաղի վազմադիր լուծման մէջ: Ան նշեց, որ Նայասպանի ղեկավարութեան հետ հանդիպումներու ընթացքին զիջելու քննարկումներ կ'ընդունուին, որոնք կ'ընդունուին իր կողմէն: Խարազի զիջելու պատրաստ է իր քննարկումները հիմնական նիւթերէն զիջելու ըլլալ Կովկասի անվտանգութեան հարցը: «Մենք կը կարծենք, որ Կովկասի խաղաղութեան յարցը կարգաւորուի միայն իսրայէլեան եւ Վրաստանի ղեկավարութեան հետ ունեցանք խորհրդակցութիւններ, բնականաբար նաեւ Նայասպանի մէջ զիջելու քննարկումները շրջանի անվտանգութեան ամրապնդման հետադարձութիւնը», ընդգծեց Խարազի արքային գործոց նախարարը:
Խարազիի զիջումները յայտարարութիւնը այսօր հանդիպումներ զիջելու Նայասպանի նախագահ Ռոմէթ Բոչարեանի, վարչապետ Անդրանիկ Մարգարեանի, արքային գործոց եւ յաշտութեան նախարարներ Վարդան Օսկանեանի եւ Սերժ Սարգսեանի, ինչպէս նաեւ նախագահի աշխատակազմի ղեկավար Արարատ Թումանեանի հետ:

Շար.ը՝ էջ 10

ՓԱՌԻԸԼ ՅԵՏԱԶԳԱԾ Է ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՇՐՉԱՊԵՏՈՅՏԸ, ՍԱԿԱՅՆ ՍՈՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Միջազգային Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը այս շաբաթ Միջին Արեւելք շրջապտոյտի մը ծրագիրը յետաձգած է: Փոխարէնը ան պիտի այցելէ միայն Սուրիա եւ Լիբանան, Սպանիա եւ Ալպանիա այցելութիւնները ետք, յայտնած են արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատարներ, երէկ:
Փաուլը իր շրջապտոյտին ընթացքին պիտի այցելէ Եգիպտոս, Յորդանան, Սեւտական Արաբիա, եւ Թեհրան նաեւ Իսրայէլ եւ պաղեստինեան իշխանութեան: Պաշտօնատարները յայտնած են, թէ Փաուլը որոշումը կ'այցուցանէ յետոյ այն եզրակացութեան, թէ տակաւին շատ կանխահաս է պնդելու, որ խաղաղութեան հաստատման նպատակով այսպէս կոչուած «ուղեգիծ» գործադրուի:
Փաուլը Հինգշաբթի օր պիտի այցելէ Սպանիա, որ տեսակցութիւններ պիտի ունենայ եւրոպացի պաշտօնատարներու հետ: Ապա ան Ուրբաթ օր պիտի մեկնի Թիւրքիա (Ալպանիա), որ պիտի մասնակցի Մ. Նահանգներու Արդիական Ուխտին կ'ընդունի Մ. Նահանգներու Ալպանիոյ, Խորհրդային եւ Մասնաշրջանի միջեւ:
Փաուլը Ուրբաթ օր պիտի այցելէ Դամասկոս, իսկ Շաբաթ օր՝ Պէյրութ, որ ան սուրիացի եւ լիբանանցի ղեկավարներուն հետ պիտի քննարկէ իրենց հողամասերէն հակաիսրայէլեան բրտութիւններ եւ ամերիկեան այլ մտահոգութիւններ, ըսած են պաշտօնատարները:
Փաուլը եւ նախագահ Շորթ Պոլի Քարթրայտի յայտարարութիւնները այս ամիս գոյնացուցած էին Դամասկոսը, թէ պէտք չէ օժանդակել Սատամ Հիւսէյնի տապալած վարչակարգին անդամներուն, որոնք Պաղտստինէն խոյս կու տան:
Ամերիկացի պաշտօնատարներ նաեւ մտահոգութիւն արտայայտած են Սուրիոյ գորակցութեան գծով:

կազմակերպութիւններու, որոնք ըստ Ուաշինգթոնի ահաբեկական են, ինչպէս նաեւ հաւաքական զենքեր ձեռք ձգելու նպատակով անոր ենթադրեալ ճիգերուն գծով:

ՈԱՍՏՖԵԼՆ ԴԱՐՉԵԱԼ ՍՈՒՐԻԱՆ ԿԸ ԸՆԱՂԱՍԷ

Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրոյ Ռամսֆելտ երէկ շեշտած է, թէ Ուաշինգթոն Սուրիոյ չի սպառնար՝ Իրաքի դէմ պատերազմին լոյսին տակ, սակայն ան դարձեալ ամբաստանած է Դամասկոսը՝ Սատամ Հիւսէյնի տապալած վարչակարգին օժանդակած ըլլալու յանցանքով:
Սեւտական Արաբիա այցելութեան մը ընթացքին, պատասխանելով քրդակցութեան մէկ հարցումին, ինչ կը վերաբերի Սուրիոյ դէմ «կանխարգիլող հարուածներուն», Ռամսֆելտ ըսած է. «Գաղտնի օրակարգ չունինք»:
Ան յայտնած է, թէ Սուրիա «օթալիսերով գիծեալները որկրած է Իրաք՝ զենքերով եւ դրամով» եւ արտօնած է իրաքի բարձրաստիճան պաշտօնատարներուն, որ խոյս տան:

(ԱՖՓ)


ՎԱՆՏԱԼԻՉՄՈՎ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԾԱԾԿԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (ԿՈՍԻՏԱՍԻ ՓԱՐԻԶԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՍՐԲԱՊԸՄՈՒՄԻՆ Ի ԼՈՒՐ)

ԷՁ 2

PHOTO NERSES
(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)
ՀԻՄՆԱԳՐՄԱՆ
25 ԱՄԵՆԱԿԻ ԱՌԻԹՈՎ
36 photo ֆիլմի
նկարահանումը
միայն 8,000 Լ. Ո.
(Kodak Royal քարտի վրայ տպուած
եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ)
... ԵՒ ՍԱՅՅԷՆ ՆԱԵՒ
Լուսանկարի ցուց ֆիլմ մը + ալպոմ մը +
նկարի INDEX մը
Կը նկարեմք փոքրերու լուսանկարներ
ՉԱՏՎՈՒՄԸ յատուկ յարգարանով
PHOTO NERSES: Պուրճ Լամուտ, Բաղաքապետարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»ի դիմաց:
Տեղ. 01 - 261858 եւ 01 - 255992

ԻՐԱՔԵԱՆ ՀԱՐՑՈՎ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ԿԻԻԼ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՉ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ՀԵՏ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտուլլա Կիլ երէկ Դամասկոս այցելելէ՝ սուրիացի ղեկավարներու հետ քննարկելու համար յետ պատերազմեան Իրաքի ապագային եւ Մ. Նահանգներու հետ որոշ քաղաքական յարաբերութեանց առնչուող հարցեր:



Կիլ Դամասկոս հասնելէ ետք յայտնած է, թէ ժամանակը հասած է շրջանին մէջ գտնուող երկիրներու միջեւ գործակցութեան թափ տալու՝ «խաղաղութիւն եւ կայունութիւն երաշխաւորելու համար»:
«Սուրիա եւ Թուրքիա դրացի եւ բարեկամ երկիրներ են», ըսած է ան, ըստ ՍԱՆԱ լրատու գործակալութեան, յոյս յայտնելով, թէ իր այցելութիւնը օգտակար պիտի ըլլայ քաղաքական եւ տնտեսական յարաբերութեանց եւ վրաստանի շրջանի կարգաւորման: Սուրիոյ նախագահ Պաշտաբ Ասատի, ապա

Շար.ը՝ էջ 9

ՊԵԹԸԼ Կ՛ՈՒԶԷ ՔԱՅՔԱՅԵԼ ՀԸԶՊԱԼԼԱՆ

Կ՛ԸՄԵ ՇԷՅՆ ԲԱՊԱԼԼԱՆ

Շիրինու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միֆթի շէյն Ապտէլ Էմիր Քապալան երէկ խստի քննադատեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պեթրլի յայտարարութիւնները եւ նկատել տուաւ, որ ան կը շրջի լիբանանցի ղեկավարներուն եւ անոնցմէ կը պահանջէ քաջաբայեղ չեղարկում եւ սեպ խելի չեղարկում - Լիբանան - Սուրիա անբախտելի կապին:

Քապալան շեշտեց, որ անհրաժեշտ է ազգային յանձնարարականութիւնը ցուցաբերել եւ գործակցութիւնը ամրապնդել: Միւս կողմէ, Քապալան ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Իրանի մշակութային կցորդը՝ Մոհամէտ Հուսէյն Հաշիմի, որուն հետ քննարկեց պաղեստինեան տագնապը եւ Իրաքի մէջ վարագումները:

ՊԵԹԸԼ՝ ՍՏԷՅՐԻ ՄՕՏ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՅՍՏԱԿ Է ԼԻԲԱՆԱՆԻ ՍԷՋ ՕՏԱՐ ՈՒԺԵՐՈՒ ՆԿԱՏԱՍԱՐ

Մարոնիներու Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքը երէկ Պեթրլի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պեթրլը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցեր:

Պեթրլ յոյս յայտնեց, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը կատարելիք այցելութիւնը Լիբանան եւ Սուրիա կը նպաստէ փոխ յարաբերութիւններու բարելաման:

Պեթրլ շեշտեց, որ ամերիկեան վարչակազմի կեցուածքը՝ Լիբանանի մէջ օտար ուժերու նկատմամբ, յստակ է եւ անդառնալի:

ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՔԸՐՏԱԶԻ - ՍԻՆԻՈՐԱ ԲԱՆԱՎԷՃ

Հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան - Լուի Քըրտահի հաղորդագրութեամբ մը խստի դատապարտեց ելեւմուտքի նախարար Ֆուատ Սինիորայի գործելաձեւեր՝ նամակի մը խարոյկ: Արդարեւ, Սինիորայի յղած մէկ նամակը նախարարաց խորհուրդին՝ առանց հոն քննարկուելու հրատարակուած է «Սաֆիր» օրաթերթին մէջ, ինչ որ ընդվզեցուցած է Քըրտահին: Նամակին բովանդակութիւնը կ'առնչուի բջիջային հեռաձայնի ընկերութեանց ապապետականացման գործընթացին:

ՄԱՀԱԶԴ

ԼՕՍԻ «Գայիանէ» մասնաճիւղը կը գումէ իր հիմնադիրներէն՝

ՄԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 29 Ապրիլ 2003ին:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Յովհաննէս Գազանճեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Վարուժան Գազանճեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Ֆիրայր Գազանճեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Ջոհրայ Գազանճեան եւ զաւակուը
- Օր. Սեդա Գազանճեան
- Տէր եւ տիկին Սարգիս Շէրիքեան . զաւակուը
- Տէր եւ տիկին Յակոբ Գազանճեան եւ զաւակուը
- Շէրիքեան ընտանիք
- Ասլանեան ընտանիք
- Ճապոնեան ընտանիք
- Հարպոյեան ընտանիք
- Յովհաննէսեան ընտանիք
- Սարգսյանեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՄԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՇԷՐԻԷԵԱՆ 1922ին)

մահը, որ պահանջեց Երեքշաբթի, 29 Ապրիլ 2003ին, կէսօրուան ժամը 1:00ին, սրտի կաթնուածի պատճառով: Ծնողարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 30 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին Ժնեւի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ: ●Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պակին՝ Վարուժան Գազանճեանի բնակարանը, Հինգաբլու 1, Ուրբաթ 2 եւ Շաբաթ 3 Մայիսին: ●Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել ԼՕՍԻ «Գայիանէ» մասնաճիւղին, Պէյթ Գօգօ:

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐԸ ՅԱՏԿԱՆՇՈՒԵՑԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ...

Շարունակուած Ա. ԷջԵԿ

Վարչապետը իր խօսքին մէջ ընդգծեց, որ Լիբանան - Սուրիա հեզասահ յարաբերութիւնները մնալու են, կայուն եւ ճակատագրական ընտրանք են պատմութեան, աշխարհագրութեան, եղբայրութեան եւ միացեալ շահերէ թելադրուած: Ան աւելցուց, որ կառավարութիւնը մտադիր է զանոնք խորացնել մշակութային, տնտեսական եւ քաղաքական մարզերէն ներս, ամրապնդելու համար փոխ յարաբերութիւններն ու գործակցութիւնը:

Վարչապետը յայտնեց, որ Լիբանանի ուղղուած սպառնալիքները միշտ կը զգացընեն Սուրիոյ եւ սուրիական բանակի օժանդակութեան կարիքը, նկատել տալով, որ սուրիական ներկայութիւնը լիբանանեան հողերուն վրայ օրինական եւ անհրաժեշտ է եւ որոշուած է զոգ պետութիւններուն ռազմավարութեան համաձայն:

«Կառավարութիւնը անհրաժեշտ կը գտնէ ելեւմտական եւ տնտեսական ծրագրեր ներու արագ գործադրութիւնը եւ ամբողջացումը», ըսաւ վարչապետ Հարիրի:

Վարչապետ Հարիրի աւելցուց, որ կառավարութեան աշխատանքային նոր ծրագիրը կ'ընդունացած է նաեւ ուսման, կենսոլորտի, կանանց, ընկերային մարզի, երիտասարդութեան, աշխատաւորներու իրաւունքներու, օդային փոխադրութեան դրութեան, ճարտարարուեստի, երկրագործութեան, ջուրի հարստութեան, ինչպէս նաեւ ուժանիւթի ներածման եւ այլ հարցերու լուծման վրայ:

Վարչապետ Հարիրի իր խօսքին մէջ հաւատեց, որ կառավարութիւնը «հնչեղ» խոստումներ չէ կատարած, որովհետեւ քաջամասօթ է շրջանային ու միջազգային լարուած մթնոլորտին ու մարտահրաւէրներուն:

Վարչապետ Հարիրի աւելցուց, որ կառավարութեան պահանջած վաւերացումը խորհրդարանէն միայն իրեն չի պատկանիր, այլ ամբողջ երկրին:

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

Երէկ առաւօտեան ժամը 10:45ին խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի բացուած կատարեց խորհրդարանի լիագումար նիստին: Նիստէն բացակայեցան երեք փոխաններ՝ Նայա Մուաուատ, Մուհամէտ Սաֆարի, Փիեռ Հըրու, Մուհամէտ Հաժժար եւ Անթուան Ղանճմ:

Ապա Պըրրի ներկայներէն խնդրեց երկու վարչկեան յոտնկայս լուծութեամբ յարգել երեք փոխաններ Անդրանիկ Մանուկեանի եւ Հիւսէյն Ապտալայի յիշատակը:

Նիստի պաշտօնական բացումէն ետք վարչապետ Հարիրի խորհրդարանին ներկայացուց կառավարութեան աշխատանքային ծրագիրը, որուն մասին անդրադարձած ենք արդէն սոյն լուրին մուտքով:

Շար.՝ Էջ 10

ԼԱՇՈՒՏ ԵՒ ՕՊԷՅՏ ԸՆՆԱՐԿԵՑԻՆ ՓԱՌԷԼԻ ԵՒ ՇԱՐԷՐԻ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՊՈՒԱԾ ԸՆԴՅԵՐ



Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտը, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները՝ Իրաքի մէջ սրճանագրուած վարագումներուն լոյսին տակ:

Քննարկումի առարկայ դարձան նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը ի շրջան կատարելիք այցելութիւնը, ինչպէս նաեւ յառաջիկայ Հինգաբլուի (վաղը) Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէիի Լիբանան այցելութիւնը, ինչպէս նաեւ Լիբանան - Սուրիա երկկողմանի գործակցութիւնը:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ պալատայցելեցին նաեւ պետական նախարար Միշէլ Մուսա եւ նախկին նախարար Պարա Մըրհէփ:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ ստացաւ Լիբանանի մէջ հինգ նոր դեսպաններու հաւատարմագիրները, ներկայութեամբ Օպէյտի:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Տիգրան Գարրիշեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Վաչէ Գարրիշեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Թոնի եւ Սեդա Սուգայեմ եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Զաւէն Սանոսեան եւ զաւակուը
- Տիկին Մարի Աժմօ
- Տիկին Անահիտ Ֆիթիքեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Յովսէփ Ժանիկեան եւ զաւակուը
- Տէր եւ տիկին Վարագդատ Ժանիկեան եւ զաւակուը
- Տիկին Հերմինէ Պօզկէզէնեան եւ զաւակուը
- Գարրիշեան ընտանիք
- Գափլանեան ընտանիք
- Լպրըզեան ընտանիք
- Չուպուբեան ընտանիք
- Քէլէճեան ընտանիք
- Չինչիեան ընտանիք
- Հալէպ ընտանիք
- Վարդանեան ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ԱՐԱԲՍԻ ԳԱՐԻԷԼԵԱՆԻ (Ծնեալ՝ ՃԱՆԻԿԵԱՆ, 1932ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 29 Ապրիլ 2003ին, առաւօտեան Հալէպի մէջ: Ծնողարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 30 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Էլ-Երեքի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուր կ'է հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ: ●Յաւակցութիւնները կ'ընդունուին թաղման օրը Չորեքշաբթի, 30 Ապրիլին, կէսօրէ առաջ ժամը 10:00ին սկսեալ Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ: ●Իսկ Հինգաբլուի, 1 եւ Ուրբաթ 2 Մայիսին հանգուցեալին բնակարանը, Թապարիկ, Շաբուր Թրատ թաղ, Ապի Բարան 2էնք 3րդ յարկ:

ԱԿՆԱՐԿ

ՎԱՆՏԱԼԻԶՄՈՎ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԾԱԾԿԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (ԿՈՄԻՏԱՍԻ ՓԱՐԻԶԻ ՅՈՒՇԱՐԶԱՆԻՆ ՍՐԲԱՊՂՇՈՒՄԻՆ Ի ԼՈՒՐ)

Հալի երկու օրուան կեանք ունեցող Կոմիտասի յուշարձանը Փարիզի մէջ ենթարկուեցաւ թրջական նոր վանտալիզմի: 24 Ապրիլին, Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հովանաւորութեամբ, Փարիզի քաղաքապետութեան նախաձեռնութեամբ եւ քաղաքապետ Պերթրան Տըլանոյի ձեռնարկով կատարուած յուշարձանին բացումը՝ ի յիշատակ եւ ի յարգանք Հայկական Յեղասպանութեան 1,5 միլիոն նահատակներուն, յայտնապէս մատ խածնել տուած է թուրքերուն, որոնք չուշացան յաջորդ օրն իսկ սրբապղծելու պայն, թրջական դրօշակ փաթեցնով անոր պատուանդանին շուրջ:

Կար ժամանակ, որ այսպիսի աժան խափանարարութիւններ կ'ընդվզեցնէին ամբողջ հայութիւնը, որ իր արժանապատուութիւնը խոցուած կը վար: Այսօր թէեւ դարձեալ կ'ընդվզին, սակայն միաժամանակ կը ծիծաղին թշնամիին իւեղձութեան ի տես: Պարպապէս խեղճացած մարդն արարք է այսպիսի աժան վանտալիզմ ցուցաբերելը: Կարելի է պատկերացնել, թէ որքա՞ն նեղ կացութեան մատնուած է թուրքը, որ իրականութիւնները կ'ուզէ ծածկել վատութեամբ, նենգութեամբ, թուրքի վայել խափանարարութեամբ ու խառնակութեամբ: Կ'երեւի այս մարդոց ցեղին արեան մէջ է, այլ խօսքով՝ ծինային է աւերել - քանդելը, զոր անոնք ծառանգած են իրենց նախահայրերէն՝ օսմանցիներէն: Փաստօրէն թուրքը միեւնոյն թուրքն է, ֆրանսերէն խօսի թէ թրքերէն, օսմանցի կոչուի թէ քեմալական, շալվար հագնի թէ քոսթիմ... Յուշարձանին դէմ այս վատութեան արարքը տեղ մը անպայմանօրէն նաեւ ուղղուած է ֆրանսական պետութեան: Ի վերջոյ, նախագահին հովանաւորութեամբ կանգնեցուած այս կոթողը կը պատկանի Ֆրանսայի, հետեւաբար անոր ուղղուած որեւէ արարք՝ ուղղուած կ'ըլլայ առաջին հերթին Ֆրանսայի: Այս յուշարձանը այսուհետեւ կը պատկանի Փարիզի քաղաքապետութեան եւ ոչ՝ հայութեան կամ Հայաստանի, այնպէս ինչպէս Փարիզի մէջ բազմաթիւ այլ յուշարձաններ, կիսանդրիներ կամ որմնանկարներ՝ Չըրչիլի, Հիւկոյի, Տը Կոլի եւ հարիւրաւոր ուրիշներու, կը պատկանին երկրին:

Եւրոպական Միութեան անդամակցելու յաւակնութիւնը ունեցող թուրքն է ահուատիկ այս խափանարարութեան «հեղինակ»ը: Եւ տակաւին «փարիզցի» թուրքը, որ կոչուած է էսթեկրէ ըլլալու, ֆրանսական բարքերու ու սովորութիւնները ընդունելու, այլ խօսքով՝ եւրոպացիի յատուկ քաղաքակրթական բարձր մակարդակով ապրելու: Եթէ այս է ֆրանսահպատակ - «եւրոպացի» թուրքը, հապա ի՞նչ սպասել Կոստանդնուպոլսոյ, Անգարայի, աւելի՛ս՝ Անատոլիոյ կիսաբոսնիկ թուրքէն, որ ինքզինք արդէն եւրոպացի սկսած է նկատել...:

Պատասխանը պէտք է տան եւ ամէնէն առաջ մտահոգուին այն եւրոպացի ղեկավարները, որոնք տակաւին կը յամառին լորձնաշուրթ արտայայտուի թուրքին հասցէին: Մինչ այդ, հայկական բեմահարթակ վերադառնալով, ուշագրաւ է, թէ Յեղասպանութեան ճանաչման յաղթարշաւին ի տես որքա՞ն պայրացած են թուրքերը՝ պետութիւն թէ ժողովուրդ հաւասարապէս, որոնք ճարտասառ կը դիմեն ամէնէն աժան միջոցին՝ վանտալիզմի, սակայն առանց մտածելու, թէ սխալը սխալով չի սրբագրուիր, թէ վանտալիզմով հարցերը չեն լուծուիր, ընդհակառակն՝ կը բարդանան, թէ խափանարարական արարքներով կարելի չէ ծածկել իրականութիւնը, յատկապէս քառամէկերորդ այս դարուն: Իսկ կարիքը կա՞յ անգամ մը եւս յիշեցնելու, թէ թուրքին կը մնայ մէկ ճար միայն՝ հրաժարիլ ուրացման ու ծիտման իր անյոյս ու ապարիւն քաղաքականութենէն, ճանչնալ եւ ընդունիլ իրողութիւնները, հատուցել պատմական իր սխալներուն գինը: Այլընտրանք չկայ:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Հ.Յ.Գ. ԶՈՒԴ

Հ.Յ.Գ. ԼԵՄԻ

Կազմակերպութեամբ
Հ.Յ.Գ. ԶՈՍԻ եւ ԼԵՄԻ
ՊԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝
ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացուց
ԳՈԿՏ. ՀԻԼՍՄԻ ՔԱՅԶԸՐ

Ուրբաթ, 2 Մայիս 2003, ժամը 20:30ին,
Յակոբ Տըր Սելընցեան սրահին մէջ, Պուրճ Համուտ:

ԼԻԲԱՆԱՆԱԸԱՅ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՃԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՃԱՃ ՁԵՌՆԱՐԿՈՎ ՄԸ ՅԱՐԳԱՆՔԻ ԻՐ ՏՈՒՐԸ ՄԱՏՈՒՑԵՑ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 1,5 ՄԻԼԻՈՆ ՆԱԸԱՏԱԿՆԵՐՈՒՆ



Երեքշաբթի, 29 Ապրիլի կեսօրուան ժամը 12:00ին, Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ՝ հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի եւ ներկայութեամբ Քաղաքական ժողովի ատենապետ Ժիրայր Պարսումեանի ու Ալզալի վարժարաններու տնօրէններուն, Լիբանանի ալգալին վարժարաններու աշակերտութիւնը նշեց Հայկական Ցեղասպանութեան 88ամեակը:

Ուսումնական Խորհուրդի կազմակերպած այս ձեռնարկին բնորոշ յատկանիշը այն էր, որ անիկա ունէր զուտ աշակերտական բնոյթ եւ հիմնուած էր աշակերտական ուժերու վրայ, որոնք ասմունքով, մենեքով եւ նուազով եղան թարգմանը Մեծ Եղեռնի ահաւորութեան եւ նահատակներուն պատգամին:

Բացման խօսքը կատարեց Ե. Մանուկեան Ալզալի քոլէճի աշակերտուհի Հուրի Եղորթեան, ապա գործադրուեցաւ յաւուր պատշաճի գեղարուեստական յայտագիր: Բացման խօսքին մէջ, Եղորթեան բացաւ. «Թուրքը փորձեց արմատախիլ ընել հայութեան ծառը, սակայն չյաջողեցաւ, որովհետեւ իբրեւ ժողովուրդ, բոլոր ժամանակներուն կը յաղթահարենք բոլոր տեսակի դժուարութիւնները, կը գոյատեւենք, կ'ապրինք, կը պարգանանք, ունինք կազմակերպուած Սփիւռք, անկախ հայրենիք եւ իբրեւ միասնական ժողովուրդ՝ տէր կը կանգնինք մեր դատին եւ պահանջատէր ենք մեր արդար իրաւունքներուն ձեռքբերման»:

Գեղարուեստական յայտագիրը ընթացաւ հետեւեալ կարգով. Ասմունք՝ Սիամանթո՝ «Խեղդամահը», Սուրբ Խանամիրեան վարժարան - Նայիրի Ղազարեան: Նուագ՝ (ջութակի վրայ) Սպենդիարեան՝ «Օրօր», Եղիշէ Մանուկեան քոլէճ - Հայկ Փափազեան: Ասմունք՝ Վահագն Դաւ-



թեան՝ «Ռեպլիկէմ», Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ - Գայիանէ Թաշճեան: Նուագ՝ (դաշնակի եւ սրինգի վրայ) Արամ Խաչատուրեան, «Օրօր», Սուրէն Խանամիրեան վարժարան - Տաթևիկ



Արթինեան, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ - Թամար Իսկէնեան: Ասմունք՝ Պարոյր Սեւակ՝ «Ղօղանջ Եղեռնական» - Եղիշէ Մանուկեան քոլէճ - Նայիրի Արսլանեան: Նուագ (դաշնակի վրայ)՝ Առնո Պապաճեան՝ «Էլէգիա», Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ - Մարիա Փայազեան: Խմբական արտասանութիւն՝ Գեղամ Սարեան՝ «Դէպի Կառափնարան», Սուրէն Խանամիրեան վարժարան՝ Եր. Պապարեան: Մենեք՝ «Յուշարձաններ» - «Հայ ապրինք», Եղիշէ Մանուկեան քոլէճ - Սեւակ Հափազեան: Ասմունք՝ Մարք Ռիժով՝ «Ապրիլ» (թարգմանութիւն՝ Սիլվա Կապուտիկեանի), Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ - Դարայր Գրիգորեան: Նուագ՝ (ջութակի վրայ)՝ «Օտար ամառի ձմեռէն», Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճ - Թամար Իսկէնեան: Նուագ՝ (դաշնակի վրայ) Յարութիւնեան՝ Հայկական եղանակ, Եղիշէ Մանուկեան քոլէճ - Լեւոն Ստեփանեան:

Ձեռնարկին աւարտին, օրուան պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան:

Սրբապատիւ հայրը ըսաւ. «Քանի մը օր առաջ, այս սրահին մէջ, ձեր հայրերը ոգեկոչեցին մեր անմոռաց նահատակները եւ անժամանակեղ իրաւունքները, իսկ այսօր դուք՝ Ալզալին վարժարաններու աշակերտ - աշակերտուհիները եկած էք ամրապնդելու ձեր ներկայութիւնը, որպէսզի վաղը երբ գործի ժամը հնչէ՝ պատրաստ ըլլաք» մտածումէն առաջ նորոգելով՝ սրբապատիւ հայրը նախ կեդրոնացաւ Ապրիլ 24ի իմաստին եւ անհատական ու հաւաքական յիշողութիւնը վառ պահելու անհրաժեշտութեան վրայ, որովհետեւ ժողովուրդները կ'ապրին եւ կը յաղթանակեն, երբ թարմ ու արթուն կը պահեն իրենց յիշողութիւնը եւ անցեալը ճանչնալով՝ ուժ կը դառնան:

Ապա, հաւատարմութեան, նուիրումին եւ ալգալին գիտակցութեան կարեւորութեան վրայ ծանրանալով, Գեղամ եպ. Խաչերեան վեր առաւ Ալզալին վարժարանին եւ հայեցի դաստիարակութեան անփոխարինելի արժէքը՝ իբրեւ հաւաքական յիշողութեան ամբողջացման, ալգալին արժէքներու ճանաչման եւ ցեղային նկարագրի ձեռքբերման դարբնումի մնալուն աղբիւր:

«Վերջապէս, - եզրակացուց սրբապատիւ հայրը, - երբ ամէն օր կ'ապրինք մեր ալգալին ինքնութիւնը, երբ կը վորանանք մեր անցեալով եւ ալգալին տենչերով, Ապրիլ 24ը կը դառնայ ամէնօրեայ յաղթանակ: Ահա թէ ինչու, դուք ամէն օր պիտի ապրիք հայօրէն, տէր պիտի ըլլաք մեր իրաւունքներուն, մեր մշակոյթին, հոգին եւ ալգալին արժանապատուութեան, որպէսզի փաստենք բոլորին, որ հակառակ Եղեռնին՝ մենք կանգ, ողջ ենք դեռ եւ պիտի շարունակենք մնալ պահանջատէրները մեր իրաւունքներուն»:

Arabic header with logos: **السفير**, **النهار**, **الذئير**, **الاستقبل**, **الاتجار**

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

29 Ապրիլի լիբանանեան օրաթերթերը լուսարձակի տակ առած են նորակազմ կառավարութեան ուղղուած կեցուածքները, Իրաքի մէջ ծայր առած ցոյցերը եւ պաղեստինեան կառավարութեան կազմութիւնը:

«Նահար» գրած է, թէ Պեթըլ հրապարակ կը նետէ Լիբանանէն օտար ուժերու հեռացման հարցը:

Ըստ թերթին, կառավարութիւնը կը դիմագրաւէ քննադատական յարձակումներ:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, կառավարութիւնը կը դիմագրաւէ վստահութեան թուէն դժուարութեամբ ձեռք ձգելու վտանգը:

Ըստ «Անուար»-ի, Արալան կը պայթեցնէ իր «երկրորդ ռուժը» եւ վորակցութիւնը կը զօրակցութիւնը կը յայտնէ Ֆրէնտիէի այն արտայայտութեան, որ կ'ըսէ. «Փառքին ետեւէն գացող նախարարներ չենք, իսկ ան որ նախարարական արձուցնէն ետեւէն վազեց արդէն ինքզինք կը ճանչնայ»:

«Պայրաք» նշած է, թէ Շարէի Հինգշաբթի Պապատա կ'այցելէ տեսակետները միացնելու եւ հարցերու համակարգումը կատարելու համար: Կառավարութեան կազմութեան հարցը ընթացք կ'առնէ 29 Ապրիլին:

Հրապարակի վորակցութիւնը շնչել, իսկ Լիբանան կը մերժէ: «Մուսթաքալ» գրած է, թէ Ռաշիդկարդակի գործակցութիւնը կը յուսայ Սուրիոյ հետ: Պեթըլ Օպէյտի կը փոխանցէ իր երկրին մտահոգութիւնն ու մտավախութիւնը Հրապարակի տրամադրուած վորակցութեան նկատմամբ:

Իրաքեան իրադարձութիւններուն մասին «Սաֆիր» գրած է, թէ Պուշ կը յայտարարէ. Իրաքի մէջ ժողովրդավարութեան հաստատման երթը պիտի ըլլայ երկարատեւ ու դժուար: Իրաքցիները Կարնըրն ու անոր օգնականները կը շրջապատեն ցոյցերով եւ կասկածներով:

Ըստ «Մուսթաքալ»-ի, Պէր Դամասկոսի եւ Թեհրանի կոչ կ'ուղղէ գործակցութիւնը ցուցաբերելու Իրաքի հարցերուն կապակցութեամբ, իսկ Թէլ Աւի Ռաշիդկարդը կը դրդէ երկու երկիրներուն վարչակարգերը եւս փոխելու նպատակով:

«Լիուա» նշած է, թէ Ռամադան կ'արժեւորէ Իրաքի դէմ պատերազմին արդիւնքները եւ Սատտամի տապալումը կը նմանցնէ Պեթըլի պատի փլուզումին:

«Անուար»-ի համաձայն, Պաղտատի մէջ գումարուած ժողովին դէմ բողոքի ցոյց մը կատարուեցաւ, իսկ Մուսուլի մէջ տեղի ունեցած բախումներուն ընթացքին Կոնիք արձանագրուեցան: Ամերիկեան պատասխանատու մը իր լուրերը քաղելով Թարէք Ալի-րուսթայեանի հետ, որ Պեթըլ կառավարութեան վստահութեան քուէ տալու նիստէն առաջ կը պահանջէ

թէ Ամերիկա պիտի նուազեցնէ Իրաքի մէջ իր ուժերուն թիւը եւ կ'ուսումնասիրէ իր օդուծի հրամանատարութիւնը Սէուտական Արաբիայէն փոխադրելու կարելիութիւնը:

Ըստ թերթին, Ալու Մապէն կը դիմագրաւէ իրաքեան ճնշումներ՝ Արաֆաթը լուսանցքի վրայ ձգելու եւ ահաբեկչական կազմակերպութիւնները հարուածելու համար:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Իրաքեան ներքին տարակարծութիւնները կը յետաձգեն փոխանցման կառավարութեան յայտարարութիւնը: Ռամադան կ'ընդունի, որ ամերիկեան բանակը բռնագրաւող ուժ է եւ օդուծի հրամանատարութիւնը կը փոխադրէ Սէուտական Արաբիայէն:

Ըստ թերթին, Ալու Մապէն վստահութեան քուէն կը ստանայ 29 Ապրիլին, իսկ խաղաղութեան քարտէսը կը հրապարակուի յաջորդ օրը:

«Նահար» գրած է, թէ Պուշ կը խոստանայ ամերիկեան ոճը չպարտադրել. ալգալին համագումար մը պիտի գումարուի յառաջիկայ ամսուան ընթացքին Իրաքի կառավարութիւնը ընտրելու համար, իսկ բողոքի ցոյցեր ծայր կ'առնեն:

Միջապգալին լուրերու կարգին «Սաֆիր» նշած է, թէ Եմէիկ ընտրութիւնները կ'ամրապնդեն Սալէհի իշխանութիւնը:

Ըստ «Անուար»-ի, երթ օրուան ընթացքին երկրորդ լիբանանացի մը փոխադրական մը ատեւանգեց Գերմանիոյ մէջ:

«Քիֆահ Արապի» գրած է, թէ Քոլին Փաուլըի Դամասկոս այցելութեան նախօրեակին Սուրիոյ ուղղուած ամերիկեան սպանալիքները մազցում կ'արձանագրեն: Պէր կը յայտարարէ. Սուրիա եւ Իրան պէտք է կասեցնեն ահաբեկչութեան իրենց վորակցութիւնը:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ «ԼՈՒՍԱՄՈՒՏ»
Պատկերասփիւռային ծրագիրը «Թել Լիւմիթ»-էն, ԱՅՍՕՐ եւ ամէն Գործըջաբթի, երեկոյեան ժամը 7:00ին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«ԱՉԴԱԿ»-Ի ԱՊՐԻԼ 24Ի ԲԱՅԱՌԻԿԸ
Ստանալ «Ազգակ»-ի ցրուիչներն եւ գրախանութներն:
Սակ՝ 5000 լ.ն.

Partner with **LCCIEB BRITISH COUNCIL**

Հայ Կաթոլիկ ՄԵՍՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան

Բացում Գ. երկամսեակի Անգլերէն եւ Օտար Լեզուներ Համակարգիչ սկիզբը՝ 29 Ապրիլ, 2003

489 ՈՒՍԱՆՈՂ 14 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Համակարգիչի լրի դասընթացը՝ ամսական միայն 25 հազար լ.ո.

Իրաքանցիկ ուսանող կրնայ ունենալ անուանական email հասցէ www.mesrobian.com -ի վրայ

Պուրճ Համուտ, Արաքս փողոց, Հեռ. 260504

Տարի	Վարձուողներ
2001/2002	33
2002/2003	221

Տարի	Վարձուողներ
2001/2002	87
2002/2003	102

ՍՓԻԻՒՔԸ՝ ԸՆԿԵՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՐՁԱԴԱՇՏ

Հորվոյթի մը արդիւնք դասական Սփիւռքը ենթակայ է տեսանելի եւ անտես շարժումներու եւ միտումներու, որոնք իր ղեկավարութեան հեռանկարներէն չեն բխիր: Խորհրդային Միութեան փլուզումը եւ Հայաստանի վերանկախացումը նոր, անխիչանակ եւ անկազմակերպ տուեալներ ներմուծեց մեր կեանքին մէջ: Յարգ ընդունուած եւ ծառայութեան վրայ հիմնուած, կենսափորձի իրաւունքով յառաջած ղեկավարութեան կողմէն եւ կամ գայն փոխարինելով նոր դէմքեր հրապարակ կու գան, որոնք ետին կանգնող ուժերը դեռ կարելի չէ յատկութեամբ բնորոշել:

Միջին Արեւելքի ապակալունացման պատճառով տեղի ունեցած տեղաշարժերը, կէս դարէ ի վեր, մէկ կողմէ նուազեցուցին կազմակերպ համայնքներու համարանքը, միւս կողմէ՝ ուռճացուցին այլ համայնքներ կամ ծնունդ տուին բոլորովին նորերու՝ Քանաւան, Աւստրալիա, բայց նաեւ՝ Շուէտ, Հոլանտա: Խորհրդային Միութեան փլուզումէն ետք այս ուռճացումը շեշտուեցաւ եւ նոր համայնքներ ստեղծուեցան, ինչպէս՝ Սպանիա, Լեհաստան: Արդէն իսկ կարելի էր Ռուսիոյ հայ համայնքը երկու միլիոնի սահմանը կ'անցնէր: Դասական Սփիւռքի ներքին տեղաշարժերը գաղափարական-մշակութային ցնցումներու առիթ չեղան, եթէ նկատի չուենանք տեղայնական վերաբերումները, հասկնալի, բայց ոչ՝ արդարանալի: Հայաստանէն տեղի ունեցած արտագաղթը, բացի ներհայաստանեան իր հետեւանքներէն, գումարուելով բայց դեռ չպատաստուելով գոյութիւն ունեցող Սփիւռքին վրայ, ունի քաղաքական, մշակութային, լեզուական եւ հոգեբարոյական հետեւանքներ: Նոր հասանդակներ չունէին ղեկավարութիւնը, նոյնիսկ՝ այս յղացքին պարզագոյն տարողութեամբ, իսկ դասական Սփիւռքը այս նոր հոսանքը դիմաւորեց իր ներքին մրցակցութիւններուն հայեացքով, ցուցաբերեց բարեխիղճութիւն կամ հայրենասիրութիւն, բայց չուներեցաւ հեռանկարային քաղաքականութիւն: Այսօր, այս ներքին, որոնք դեռ կ'ապրին երկրաստանային-ընկերական շրջագիծի մէջ, չեն հասած դասական Սփիւռքին մերուելու հանգրուանը, քանի որ կապերը սերտ են Հայաստանի հետ, ոչ թէ հայրենիքի եւ պետութեան, այլ՝ յոյս մնացող ազգայնականներու: Այսօր, մտածելու, արժէքներու տարբերութիւններ կան, որոնք վրայ կը գուժարուի լեզուական արգելքը, որ անանցանելի պատնէշ չէ, եթէ ղեկավարութիւնը որդեգրէ դաստիարակի դեր: Եթէ եզրակացանքներու Քանաւան հաստատումը կազմակերպական, մշակութային եւ ազգային նպատակներու, օրինակ, նոյնը կարելի չէ ըսել Հայաստանէն գաղթած գանդուածի մասին: Ի հարկէ, ինչպէս միշտ, կան յարգելի բացառութիւններ:

Այսպէս թէ չայնպէս, հայկական արտասահմանը, նոյնիսկ անկազմակերպ, ուժ է. համարանք, տնտեսութիւն: Հայաստան - Սփիւռք խորհրդածոյցները չգտան փոխադրած լրացման ոսկեղէն ուղին: Այս համաշխարհային տարածումով կարողականութիւնը իր արտայայտութիւնը չէ գտած:

Ռուսիոյ Հայերու Միութիւնը մը կարելի դարձած է, որովհետեւ խորհրդային համակարգին մէջ չկային կուսակցութիւններ եւ հասարակական կազմակերպութիւններ: Թէ այդ միութիւնը ո՞ր տոկոսի մասնակցութեամբ հզոր է, չենք գիտեր: Ի վերջոյ, անոր ներկայացուցիչները կրնան խօսիլ աւելի քան երկու միլիոն անձներու անունով, մինչ դասական Սփիւռքը, հինբրով եւ նորերով, չունի ներկայացուցչական կազմակերպութիւն մը, որ խօսի երեք միլիոնի անունով: Այս բացատրութիւնները արգելք չեն, որ որոշ ուժեղ ունեն օգտագործել այս կարողականութիւնը: Միամիտ պէտք է ըլլալ խորհելու համար, որ հայեւթուրք մերձեցման գոյգ փորձերը հայկական նախաձեռնութիւն էին: Ներկայիս շատ կը խօսուի Ռուսիոյ Հայերու Միութեան եւ անոր նախագահին մասին, որ ուսուցանող մակարդակով անձնաւորութիւն է: Զգուշացնում կայ համասփիւրջեան կազմակերպութիւնը յառաջանելու, որ պիտի ունենայ իր ղեկավարութիւնը: Պէտք է յուսալ, որ այդ ղեկավարութիւնը կ'ըլլայ ժողովրդավարականօրէն ազգընտիր, եւ ոչ՝ դրամագրութիւն ներկայացուցչութիւն: Ոչ ոք դէմ է նման ցանկութեան, բայց նախ պէտք է սահմանել վախճանական նպատակ, finalité, այսինքն պէտք է որոշել ինչն է, ի՞նչ պէտք եւ որոնցմով վր: Այս կազմակերպութեան նպատակը միայն տնտեսական է, հետեւաբար ուղղուած՝ Հայաստանի վերականգնման, թէ համազգային-համահայկական, որուն մէջ լայն տեղ կը տրուի ազգի կէսէն աւելին հանդիսացող Սփիւռքի հայկական հարցերուն:

Պէտք է գոյու ըլլալ, որ հայեւթուրք մերձեցման կամ հաշտեցման փորձերուն պէս, հեռավար հրթիռներու նմանողութեամբ անձեր հրապարակ չգան՝ դրամի առջեւ ծուրը դնելու մեր տկարութիւնը եւ շատերու պատեհապաշտութիւնը չարաշահելով:

ՅԵՂԱՇՐՋՈՒՄԻ ՍԵՆԱՐԻՕ՝ ԿՆՇԻ ԽՈՒՆՆՈՅԷՆ

Օրերս, ՀՀՇԻ վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեան հերթական նոսթրատմութեան, աւելի ճիշդ՝ սիրադեղեանական կանխատեսումը կատարեց: «Մէկ տարի ետք Լեւոն Տէր Պետրոսեան պիտի վերադառնայ»:

Ինչո՞ւ, պիտի հարցնէ ընթերցողը: Ի՞նչ բանէ չէ շարժուող զուրաբեանը ՀՀՇԻ առաջնորդական փոխանորդը: Զէ՛ որ նախագահական ընտրութիւններէն ընդամենը մէկ կուկէս ամիս անցած է, Սահմանադրական դատարանն ալ 16 Ապրիլի իր յայտնի որոշումով «միարժէքօրէն» մերժեց Ստեփան Դեմիրճեանի դիմումը՝ անոնց արդիւնքները անվերահսկելու առումով: Անանցանալիս խորթափայն պէտք չէ ըլլալ՝ հասկնալու համար, որ ՀՀՇ աշխարհակարգին խանդավառութեան առիթը Սահմանադրական դատարանի անկիւնադարձային որոշումին ճիշդ կէտին մէջ ամրագրուած «վստահութեան հանրաբուժի» մեռելածին գաղափարն է: Իբրեւ թէ մէկ տարի ետք նախագահին «ազգովին» անվստահութիւն պիտի յայտնենք, 40 օր ետք ալ նախկին նախագահին «ազգովին» պիտի խնդրենք, վստահութեան քուէ պիտի տանք ու վերստին մեր գլուխներուն կրակ ու պատիժ պիտի դարձնենք:

Ճիշդ է, Սահմանադրական դատարանի նախագահ Գաղիկ Յարութիւնեան կ'առաջարկէ, թէ յիշեալ անմեղ առաջարկը բարի նպատակ կը հետապնդէր, այսինքն հասարակա-

կան դիմակայութիւնը մեղմացնելու խորք ունէր, բայց տարրական տրամաբանութիւնը կը յուշէ, որ Սահմանադրական դատարանին նախագահը, մեղմութեամբ, խորամանկութիւնը կը բանեցնէ: Վկայ՝ նմանապէս այն պերճախօս իրողութիւնը, որ տակաւին 15 Ապրիլին, այսինքն՝ Սահմանադրական դատարանի խորհրդակցական սենեակին մէջ յայտնուելու նախօրեակին, որոշում մը տակաւին չընդունուած, ՀՀՇ-ական մամուլը արմատական հանրութեան աւետած էր, թէ՛ աչքերնիդ լոյս, Սահմանադրական դատարանը, ուզէ՛ չուզէ՛, ստիպուած է վաւերացել ընտրութիւններու օրինականութիւնը, բայց մինչ չուզէ՛, այս որոշումին մէջ կը պատրաստուի դանդաղ գործողութեան գերհզօր ական գետեղէն՝ «վստահութեան հանրաբուժի» պայմանական քրտուկ:

Այսինքն կը հասկնալի, որ Սահմանադրական դատարանի նախագահ Գաղիկ Յարութիւնեան հանրաբուժի առաջարկը նախապէս քննարկած է ՀՀՇ-ական շրջանակներու հետ, եւ այս կարիւրագրական շնորհակցութեան 67րդ յօդուածին:

Սահմանադրական դատարանի 16 Ապրիլի որոշումին ճիշդ կէտը, աւաղ, անխորհրդակցական չէ՛ այն պարզ պատճառով, որ հեղափոխութեան 67րդ յօդուածին:

Սահմանադրական դատարանի 16 Ապրիլի որոշումին ճիշդ կէտը, աւաղ, անխորհրդակցական չէ՛ այն պարզ պատճառով, որ հեղափոխութեան 67րդ յօդուածին:

«ԹՈՒՉՆՈՑ ԲՈՅՆ»Ի ՄԱՐՏ 2003Ի ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տէր եւ տիկին Էտմոն Եւսեփ Բուրճեան Սիւսեան Նահանգներէն 1,987,67\$, Յոնաստանի Թեմի Ազգային վարչութիւնը 1000\$, Սիրիոյ Աճմեան Սորթոն Սիւսեան Նահանգներէն 970\$, տէր եւ տիկին Կարօ Նաճարեան 100\$ եւ տէր եւ տիկին Պետրոս Էճշիշեան 200\$:

● ՀՈՒՉԵՆՆԵՐՍ
Նազարեթ Պոյաճեան, հօրը յիշատակին 100\$, տէր եւ տիկին Վահէ Առաքելեան, Ժան Առաքելեանի մահուան քառասունըքն առիթով 200\$, տէր եւ տիկին Գարեգին Եւսեփ Եւսեփեանի մահուան քառասունըքն առիթով 500\$:

Տիկին Շերմինէ Էտմոնեան 100,000 լ.ո. եւ Խաչիկ Մկրտիչեան 50,000 լ.ո.:

● ՀՈՒՉԵՆՆԵՐՍ
Տէր եւ տիկին Ստեփան Կարապետեան, Կարապետեան ընտանիքի ԳՆԶԵԳԵԱԼՆԵՐՈՒՄ հոգույն համար 50,000 լ.ո., տիկին Շաքէ Պէգեմեան՝ Արմէն Պէգեմեանի մահուան առիթով 50,000

լ.ո., տէր եւ տիկին Յակոբ Եւսեփ Եւսեփեան 30,000 լ.ո.:

«The National Trust» 10 անգլիական սթերլինգ:

● ՁԱՆԱԶԱՆՔ ՈՒՄՏԻ ԱՌԻԹՈՎ
Ազգային մը 185 հատ կարկանդակ եւ 2 քարթոն «Պոնտիւս», ազգային մը 10 տուփ «Մալիկ», ազգային մը 6 մեծ տուփ «Մալիկ», անուշավաճառ «Սէնթ Էլի» 1 սնունկ տուրմ, Խորէն Այնթապեան 25 զ. բրնձ, 1 սնունկ օճառ, 1 սնունկ մաքարոնի, 3 քարթոն հաւկիթ, 1 սնունկ շալիլի, 5 զ. ոսպ, ազգային մը 10 զ. ծեծած ցորեն, «Ինքըրպրէտ» ընկերութիւն 50 սնունկ «Լիպիս» իւրակէ օխ, ազգային մը 7 սնունկ

պտուղի հիւթ եւ 40 հատ կարկանդակ, տիկին Լեւոնա Հոյեան 75 շիշ «Բալթա» եւ 12 բաքէթ «Ինկիշ Էլե», 10 քարթոն «Պոնտիւս», 7 տուփ քարկէ չիւս եւ 7 տուփ կրկնեղէն, ազգային մը 11 հաւ, ազգային մը 40 զ. համալրկըրի միս եւ 408 հատ հաց, տիկին Հայրապետի Լուսարեան 11 սնունկ հագուստեղէն եւ քարթոն, «Ջուրթոն» կեղծ 118 հատ գրիչ, տիկին Արշալոյս Գաղաճեան 13 հատ աճորաք, 8 հատ գազակ, 1 հատ ճերմակ ծածկոց, 16 հատ սիրովեման, 6 հատ բիծամա, հատ ֆիլոս, ազգային մը 2 հատ ողջ ոչխար, 7րօ Պալեան 1 հատ ողջ ոչխար, փոքրիկներ Ժաք եւ Մանօ Սիմոնեաններ 1 հատ մորթուած ոչխար, ազգային մը 2 հատ մորթուած ոչխար:

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՒ ԽՈՒՆՆՈՅԷՆ ՆՇՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԿԵՈՋ ՈՒՂԵՑՈՅՑ

Վերջին տասնամեակին բազմազան սննդակարգի վերաբերեալ թեւադրական ճիշդութիւնները, խոհարարական արւեստը գարգացրելու պատկերասփիւռային թէ ձայնասփիւռային հաղորդումները, այս մարզը ընդգրկող յատուկ դասաստական ձեռնարկները: Լոյս տեսան բազմաթիւ գիրքեր՝ կերակրական արտադրութեան կերպերը ուսուցանող: Ընտանիքի մայրեր, իրական սեռի պատկանող խմբակներ մեծ ուշադրութեամբ հետեւեցան առողջ պահպան հիմնական ազգակը հանդիսացող ուսուցիչներու պատրաստութեան կերպերուն: Մինչեւ իսկ եղան «մայրուկայտիք» ջերմ հետեւորդներ: Մամուլը իր կարգին լայն տեղ տուաւ մասնագիտական յօդուածներու այս ասպարէզով հետաքրքրողներուն գոհացուցող համար: Զմոռնանք նաեւ յիշելու ճաշի պատրաստութեան յատուկ դասաւանդութիւնները, միութեանական թէ անհատական նախաձեռնութեամբ:



Խոհարարական կենսական գիտելիքները փոխանցող գեղատիպ հատոր մըն այլ լոյս ընծայած է բժշկուհի Գոհար Վարդանեան-Քէշիշեան, որ պարզ ու յստակ բացատրութիւններով ներկայացուցած է սննդակարգի արուեստը, ջերմութիւն եւ կենսանիւթերու քանակն ու որակը թելադրող ուսումնասիրութիւն մը: Այս հատորով բժշկուհին կու գայ օգտակար ըլլալու հայ կնոջ՝ անոր յանձնելով ուղեցոյց մը, որպէսզի պահպանէ իր ֆիզիքական ու հոգեկան գեղեցկութիւնը, առողջութիւնը:

Հատորին երկրորդ մասով բժշկուհի Գոհար Վարդանեան-Քէշիշեան կատարած է նաեւ կնոջ դէմքին թափաքանութեան պահպանումը, նշումներ, քանակներով եւ պտուղներով պատրաստուած «դիմակներու» տեսակաւոր գիտելիքներ՝ ներկայացնելով անոնց պատրաստութեան եւ օգտագործման չափերը, կերպերը, ձեւերը:

Հատորին վերջին մասը յատկացուած է վերոյիշեալ ճաշերու եւ «դիմակներու» բաղադրութեան եւ պատրաստութեան եղանակները սորվելու եւ արձանագրելու սպիտակ էջեր՝ իբրեւ առձեռն օգտագործման դիւրութիւն:

Մեր իրական սեռը կընայ օգտուել այս ցուցմունքներէն եւ նշումներէն, ընտանեկան իր պարտականութիւնները կատարելու՝ խոհանոցէն ներս, նոյն ատեն իր երիտասարդութիւնը եւ գեղեցկութիւնը երկարատես պահպանելու:

Իբրեւ մասնագէտը այս գիտելիքները բժշկուհի հեղինակը օգտակար ներդրում մը կատարած է, մանաւանդ՝ երբ նկատի ունենանք տեղ-տեղ ոչ ուսումնասիրուած թելադրանքները, որոնք երբեմն հեռու կը մնան գիտական գործիցէ:

«Հայ կնոջ ուղեցոյց» հատորը ունի տրամաբանական հիմունքներէ մեկնած թելադրանքներ, ոչ չափազանցուած կիրառելի թելադրանքներ, օգտակար եւ հաճելի նոյն ատեն:

Ս. Պ.

www.aztagdaily.com

Մայիս 2003
Հ.Բ.Ե.Ս. ՊՕՂՈՍ Գ. ԿԱՐՍԻՐԵԱՆ ՄԻՋԸ. ԿԱՐԺԱՐԱՆ ԸՐԱՆԱՒԵՐՏԻՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՇՐՋԱՊՏՈՅՑ ԴԷՊԻ ՊԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
(Սահիկներու ցուցադրութիւն)
Առաջնորդութեամբ հայախօս գերմանացի ՅՈՎՆԱԹԱՆ ՇԲԱՆԿՆՊԵՐԿ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 2 Մայիս 2003, երեկոյեան ժամը 8:00ին, վարժարանիս սրահին մէջ:
ԵՐԱՒԵՐ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՆ
«Ազգային» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողները կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգային» ծանուցումներու գրասենյակը:
Տիկին Շերմինէ Էտմոնեան 100,000 լ.ո. եւ Խաչիկ Մկրտիչեան 50,000 լ.ո.:

ԱՅԻԼ
ԱՅԻՆ ԸՆԷՔ Բ. ՅԱՐԷ
ՆՈՒ. 01/242556-7

Ձեր Ինքնաշարժին Արագ Կարգով Կարգաւորութիւնը
ՎԱՏԱԿԵՅԷՔ ԱՅԻԼ-Ի

ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅ ԴՊՐՈՅԻ ՀՈԳԵՐՆ ՈՒ ՑԱԵՐԸ

Երբ բարձրարժեք քաղաքականութեան արահետներէն կը հեռանանք, կը գտնենք հայ դպրոցը, որ մեր տեսլիւն եւ տոկալու անկիւնաքարն է: Փարիզեան շրջանի Դպրոցասէր Տիկնանց վարժարանը կառուցներու պէտք ունի եւ կը կազմակերպէ հայ արուեստագետներու նուիրած գեղարուեստի գործերու վաճառք, Մարսէյի Համագրայիցի դպրոցը նետուած է մեծ փառասիրութեան մը իրականացման մէջ եւ սկսած է կառուցումը արդիական շէնքերու՝ կրկնապատկելու համար հայ տղաք եւ աղջիկներ ընդունելու իր հնարաւորութիւնները, նախածնունդից՝ որուն համար պատասխանատու ենք հաւաքաբար: Մեր գանգակատունէն քիչ մը հեռու, Լիբանան, վտանգուած են հայկական վարժարանները: Անոնք ալ մեզի կը պատկանին: Լիբանանի տնտեսական տագնապը, ապրելու եւ տոկալու դժուարութիւնները բազմաթիւ են: Տնտեսապէս հարուստուած հայ ծնողներ, ինչպէս ընդհանրապէս տեղայինները, իրենց զաւակները կը դրկեն պետական վարժարաններ եւ մէկ դարու ընթացքին ստեղծուած գոյատեւման սովորութիւնները փոխ կու գան, սպառնալիքի տակ է նորահաս սերունդի հայկական ինքնուրոյն նկարագիրը, քանի որ կը վտանգուի լեզուն, պիտի չժառանգուի մշակոյթը:

Հայ դպրոցը ինչպէս օրակարգ դարձնել: Ինչպէս հանրահաւաք կազմակերպել հայ դպրոցի պաշտպանութեան կարգախօսով: Եթէ հողի ազատագրումը էական է, ոչ ոք կը կասկածի այդ մասին, նոյնքան էական է հայ նորահաս սերունդի հողի անաղարտ պահպանումը, ազատագրումը, որոնք ազգային անջրջանցելի քաղաքականութիւն պէտք է ըլլան եւ չեն: Աւելի պարզ. հայ ժողովուրդի ազատագրական պայքարին եւ Հայ Դատի հետապնդման մաս կը կազմէ հայ դպրոցը, առանց որուն օր մը պիտի հաստատենք, Քրոնէյի խօսքերով, որ կռիւր վերջացաւ, քանի որ կռուող չմնաց: Լեհաստանի հայ գաղութը միշտ պէտք է լինէր. հայ գաղութ չմնաց, որովհետեւ դպրոցները անհետացան, եւ լեզու ու մշակոյթ չժառանգուեցան: Հնչեղ նաոներու, որոնց կարգախօսները պիտի չկրկնեմ, մաս չի կազմէր հայ դպրոցը, որովհետեւ անմիջականօրէն չ'ազդէր գանգուածին երեսակայութեան վրայ եւ չի համարուիր գործարժի ազգայն, քանի որ չենք բացատրել, անհրաժեշտ պնդումով: Կրաւորական դարձած հայկական համայնքները, հոս եւ այլուր, ազգային նկարագրով իրենց գոյատեւման գիտակցութիւնը նոյնքան կրաւորականութեամբ աղօտած են, չեն պահանջեր, չեն մասնակցիր: Չորս կամ հինգ հարիւր հազար գնահատուող հայկական համայնքի մը համար իրապէս մեծ խնդիր է երկու կամ երեք վարժարանի կառուցումը...

Ինչպէս նաեւ համահայկական տարագներու, միասնութեան, մեկուսութեան մասին, երբ փարիզցի անջ ճեռու սրտէ ճեռուի վերաբերում ունի Մարսէյի դպրոցին համար, Լիոնցիցի Դպրոցասէրին հանդէպ, իսկ հինգ հարիւր հազար հայերը՝ Լիբանանի հայ մանուկներու եւ հայ դպրոցներուն համար: Լիբանանի Առաջնորդ սրբազանը կը շարունակէ անգամ ճեռ ճեռ հնչեցնել, բայց կարծեք անոր ձայնը Լիբանանի տասը հազար քառակուսի քիլոմետրէն անդին չ'անցնիր: Երբեմն հարկ է խօսիլ յատուկ անուններով: Ազնուական հայերու, ինչպէս Քըրք Գրիգորեանի կամ Ֆեսեանի, կամ Քարոյան ընտանիքի, եւ ուրիշներու, ինչու համոզիչ կերպով չի խօսիր Սփիւռքի մեր ազգային գոյատեւման համար այնքան կենսական դպրոցներու մասին, անոնք գտնուին Լիբանան քէ Սուրիա, Իրան քէ Ֆրանսա, Յունաստան քէ Թուրքիա, եւ այլուր: Ինչպէս հայ դպրոցը դասուեցաւ ոչ հիմնական եւ ոչ առաջադիւր հարցերու շարքը: Աւելի դիւրին է ֆուքլոնով եւ բենիսով հետաքրքրել զանգուածները, յարդի բոց, ինքնասիրութեան մակերեսային հովահարումով:

Այս խորհրդածութիւնները կրկնութեան կը մտնեն: Ոմանք կը խորհին, որ անոնք գուտ անծնական սերերէ կը բխին: Եթէ նուազագոյն նիւրբով քիչ մը մտածենք վաղուան մասին, դիւրաւ կ'ըմբռնենք, եթէ անկեղծ ենք, որ հայօրէն գոյատեւելու համար հայկական վարժարանը պէտք է տեսէ մեզի հետ: Այս առաջադրանքով հայ դպրոցը դարձնել օրակարգ, առանց փողի եւ բմբուկի: Անոր մասին պիտի չխօսին նախագահ եւ վարչապետ, մարդիկ եւ ելեկտրական աղմուկով գալարուող երգիչ: Պիտի խօսի ղեկավարութիւնը, որ այդ կոչման արժանի պիտի ըլլայ այն ատեն, երբ ըմբռնէ դպրոցի հեռանկարային անհրաժեշտութիւնը եւ ժողովուրդին դրսեւորած կրաւորականութիւնը վերածէ իսկական գործարժի:

Մեր հասարակ պէտք է չափել դպրոցի հեռանկարային օրակարգին հանդէպ մեր յանձնարարութեամբ: Այդ դպրոցը գտնուի մեր թաղին մէջ, քէ հեռաւոր երկիր մը: Գոյատեւումը թաղային չէ, այլ համագրային: Հետեւաբար հայ դպրոցը համահայկական, առաջնահերթ եւ ամենօրեայ օրակարգ պիտի ըլլայ կամ մենք պիտի չըլլանք:

3. ՊԱՆԵԱՆ

ԻՐԱՔԻ ԴԷՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՕՐԻՆԱԿԱՆ ԶԷ

ՄԱԿԻ հռչակագիրը իր յառաջարանին մէջ կը շեշտէ. «Մենք՝ միացեալ ազգերու ժողովուրդներս, որ վճռած ենք եկող սերունդները չենթարկել պատերազմներու վտանգներուն (...) եւ գտնել միջոցները՝ ապահովելու համար գէնքի գործածութեան չդիմելու, եթէ հասարակաց շահի համար չէ այդ գործածութիւնը (...) որոշեցինք միացնել մեր ջանքերը՝ իրականացնելու համար այս նպատակները»:

Հռչակագիրը իր առաջին յօդուածով կը շեշտէ, թէ ՄԱԿԻ առաջին նպատակն է «պաշտպանել միջազգային խաղաղութիւնը» եւ «դիմադրել որեւէ յարձակողական քայլի կամ ամէն ինչի, որ կը սպառնայ խաղաղութեան»:

Եւ երբ Հինգշաբթի, 20 Մարտի առաւօտուն Իրաքը գրեւոր համար անոր դէմ սկսաւ իր «կանխարձառանց ՄԱԿԻ յանձնարարականին եւ առանց որեւէ միջազգային կառույցի մը առնուած արտօնութեան, փաստօրէն Միացեալ Նահանգներ եւ անոնց դաշնակից բրիտանացիները կը գտնուէին միջազգային հռչակագիրը ակահանաբար վիճակին մէջ: Անոնք ոտնակոխ ըրին ՄԱԿԻ հիմնական սկզբունքները, իրենք զիրենք դրին օրէնքէ զուրկ վիճակին մէջ եւ յստակօրէն որդեգրեցին յարձակողական իրաւունքները, իրենք զիրենք գործադրուած այս ոճի իրեն առջեւ, միջազգային ընտանիքը ինքզինք կը գտնէ նախադէպը չունէ:

ցող կացութեան մը դիմաց: 1945 թուականին ՄԱԿԻ հիմնադրութենէն ի վեր, աշխարհ ակահանաբար չէ եղած, որ երկու հիմնադիր երկիրներ եւ Ապահո-վոսթեան խորհուրդի մանալու անդամներ (անոնք նաեւ ամէնէն մեծ ժողովրդավարական երկիրները կը նկատուին աշխարհի մէջ) այս խենչը չենթարկուին իրենց իրաւունքները: Միջազգային օրինակաւորութեան աչքին վերածուելու համար «յարձակողական պաշտ երկիրներ»:

Անոնց այս արարքին պատճառով միջազգային կարգը խանգարուեցաւ, եւ ասիկա՝ ոչ թէ ուժեղացուցաւ որոշ հետեւ Ուաշինկթընի գերակայութիւնը ակընդ-յայտ է: Սակայն ասիկա յստակ է քաղաքական մակարդակին վրայ: Այսպէս, աշխարհի եւ նոյնիսկ Միացեալ Նահանգներու մէջ միլիոնաւոր քաղաքացիներու այս պատերազմին դէմ ցուցաբերած ընդդիմութիւնը կը մեկնի այն սկզբունքէն, որ այս պատերազմը կը տարուի անբարոյական մեկնակէտով:

Առանց երեւակայութիւններու մէջ խեղդուեցաւ, մարդիկ աշխարհի ուժեղագոյն երկրէն կ'ակրնկային, որ ան դառնայ նաեւ բարոյական ուժ, առաջինը՝ իրաւունքը յարգելու մէջ եւ օրինակ՝ օրէնքին ենթարկուելու: Կամ այլ առնուած չղարձնէ իր թիկունքը՝ քամահարանով վերաբերելով քաղաքամար բարոյականութեան մեծագոյն սկզբունքներուն նկատմամբ:

Բայց եւ այնպէս, 11

Սեպտեմբեր 2001 յարձակումներէն ի վեր կը թուի, թէ Միացեալ Նահանգները պարոն ճորճ Ուոքըր Պու-չէ եղած, որ երկու հիմնադիր երկիրներ եւ Ապահո-վոսթեան խորհուրդի մանալու անդամներ (անոնք նաեւ ամէնէն մեծ ժողովրդավարական երկիրները կը նկատուին աշխարհի մէջ) այս խենչը չենթարկուին իրենց իրաւունքները: Միջազգային օրինակաւորութեան աչքին վերածուելու համար «յարձակողական պաշտ երկիրներ»:

Ուաշինկթըն կծու պարտութիւն մը կրեց, երբ իր հին դաշնակիցը՝ Թուրքիան, մերժեց ամերիկեան ուժերուն արտօնել իր տիրապետութեան շրջաններէն անցնել: Սակայն նախագահ Պուչէն չնահանջեց իր այս կեցուածքէն, այլ շարունակեց իրաքի դէմ իր շղթայաբերած պատերազմին ծրագիրը եւ յայտարարեց 40 երկիրներէ բաղկացած «դաշնակցութեան» մը կազմութիւնը: Այս 40 երկիրներուն մէջ կան նախկին համայնապար պետութիւններ, որոնց շարքին՝ աշխարհի ամէնէն վատ նորամտող պատերազմներու արտօնութիւններէն, ինչպիսիք են, օրինակ, Ուզպեքիստանն ու Թուրքմենիստանը:

Այն պահուն, երբ իրենց յարձակումը իր շղթայաբերած Մատամ Հիւսէյնի վարչակարգին պէս բռնատիրական վարչակարգի մը դէմ, կը տեսնուի, որ նախագահ Պուչէն իր օգնականները անկարող մնացին բարոյական պատերազմը պահելու: Միջազգային օրինակաւորութեան ոտնահարումը եւ ամբարտաւանութիւնը, որ անոնք կը դրսեւորեն իրենց գիտնորական ուժին պատճառով, այս բոլոր ստեղծեց Միացեալ Նահանգներուն հակադրուող մեծ ալիք մը, որուն



նմանը աշխարհ չէր տեսած Վիեթնամի պատերազմէն ի վեր (1961-1975): ՄԱԿԻ առնթներ խորհրդողատուական կառույցը Միջազգային Իրաւագէտներու յանձնախումբը (կեղրուր ժընեւ), 18 Մարտ 2003էն զգուշացուց իրաքի վրայ յարձակելէ, առանց ՄԱԿԻ յանձնարարութեան:

Այս յանձնախումբը հաստատեց, ինչպէս որ հաստատեցին բրիտանացի, ֆրանսացի, սպանացի եւ պելճիքացի իրաւագէտներու այլ միութիւններ, թէ «այսպիսի յարձակում մը անօրինական պիտի ըլլայ եւ պիտի դառնայ օրինախախտում»: Այս յանձնակառուցումը կ'աւելցնէ. «Ոչ մէկ օրինական հիմք կայ, որ կրնայ արդարացնել այս յարձակումը: Ապահովութեան խորհուրդի արտօնութեան բացակայութեան ո՛չ մէկ երկիր կրնայ որ անոնք կը դրսեւորեն իրենց գիտնորական ուժին պատճառով, այս բոլոր ստեղծեց Միացեալ Նահանգներուն հակադրուող մեծ ալիք մը, որուն

եթէ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը իրաքի դէմ պատերազմը արդարացնելու իր ընթացքին մէջ անդադար չէր դրած էր «օրինական ինքնապաշտպանութեան» երեւոյթին, ան իր այս արարքով կը դիմէր ներքին հասարակական կարծիքին՝ փորձելով 11 Սեպտեմբերի յարձակումները կապել Պաղատի վարչապետին հետ (երեւոյթ մը, որուն ապացոյցները չկրցաւ ներկայացնել), սակայն այս արդարացումը ան ամենեւին չներկայացուց: Ապահովութեան խորհուրդին առջեւ: Վերջինս մինչեւ 20 Մարտ նկատել կու տար, որ իրաք ուղղակի սպառնալիք չի ներկայացնել, երեւոյթ մը, որ չ'արդարացըներ ուղղակի պատերազմ մը: Իսկ խօսիլ իրաքի մէջ ժողովրդավարութեան հաստատման մասին՝ ամէն պարագայի օրինական արդարացում մը չէ պատերազմին: 17րդ դարու սկզբներէն հիմնադիր իրաւագէտ Կուսիոս հաստատեց, թէ՛ «հակառակ իրենց կամքին մարդոց վրայ իշխելը՝ այս պատերազմներու ամէնէն տարածուած պատճառաւորութիւնը»:

ԻՆՒԱՍԻՕ ԱՄՈՒՆԷ
«Լը Մոնտ Տիփլոմաթիք»

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ա. ԵԿԵՂԵՑԻԻ
ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՀԱՆԳԱՆԱԿԻՉ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
1850ԵՆ Ի ՎԵՐ ԳՈՐԳԱՎԱՃԱՃՈ ըՆՏԱՆԻՔԷ
ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆԵԱՆ
Կը ներկայացնէ
ՀԱՅԿԱԿԱՆ - ԿՈՎԿԱՍԵԱՆ - ՊԱՐՍԿԱԿԱՆ
ԳՈՐԳ - ԿԱՐՊԵՏԻ
ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՎԱՃԱՌՔ
Կազմակերպուած
ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԶՈՒԷՃԻ 80ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՈՂՎ
Պաշտօնական բացում՝ Ուրբաթ, 25 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 7:00ին:
Յուգահաճուցը բաց է ամէն օր, մինչեւ Երեքշաբթի, 6 Մայիս 2003, երեկոյեան ժամը 5:00էն 9:00:
Հայ Աւետարանական Ա. եկեղեցիի հանդիսարանի մէջ:
ՄՈՒՏԸ ԱՂՍ

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայնի» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՍԸ 5:00:
ՄԱՀԱՋՂՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

FUEL CARD
Դպրոցական Ֆոնտը 2002-2003 տարեշրջանի
Կրթանպաստ տրամադրուած է մեծ թիւով հայ աշակերտներու Գործացեցէք FUEL CARDը եւ ձեր ներդրումը բերած կ'ըլլաք տնտեսական օգտաշատ ծրագիրներու իրականացման:

► MANAR - Տորա
► ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Գամուտ
► BASSIL - Տորա, կամուրջի մօտ
► AKEL եւ BASSIL - Տորա, «Քրտի Լիպանէ»ի մօտ
► SPEED - Գամբաշ, Կալիթի Իթքիատ
► ԳԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
► MALLAH - Անթիլիա, կաթողիկոսարանի դիմաց

► MALLAH - Գարեթ Դաուարճ
► MALLAH - Պալիս
► MALLAH - Ժայ Էլ Տիպի մայրուղի
► CORAL - Էշրեֆի, Ս. Յակոբ Եկեղեցոյ մօտ
► SAAD - Մար Միայել
► SPEED - Նահր, «Փլոժո» ընկերութեան մօտ
► PHOENICIA - Այնճարի մուտքին
► MALLAH - Պապատք

Միջապալին Քաղաքական Կեսնք

ՈՒՐԵՄՆ ՏԻՄԱ ՍՈՒՐԻԱՆ Է ՄԻԱՑԵԱԼ ՆԱՏԱՆԳՆԵՐՈՒՄ ԹԻՐԱԽԸ...

Առաջինը իրաքն էր. Իսրայելի ամենէն զօրաւոր թշնամին եւ զանգուածային կործանման զէնքեր ունեցողը, որոնցմէ ոչ մէկը յայտնաբերուեցաւ: Այժմ Սուրիոյ կարգն է. Իսրայելի երկրորդ զօր թշնամին եւ զանգուածային կործանման զէնքերու սեփականատէ՛րը, ըստ նախագահ Ճորճ Պուշ կրտսերին:

Ոչ մէկ խօսք կայ զանգուածային կործանման զէնքերու իսկական սեփականատիրոջ՝ Իսրայելի մասին, որուն կորիզային միջուկ պարունակող հրթիռները նեկեւի մէջ ներկայիս ճշգրտորէն ցանկազրուած են, եւ որուն վարչապետը՝ Արիէլ Շարոն, երկար ատենէ ի վեր կը բողոքէ, թէ Դամասկոս «Համաշխարհային անարեւելութեան կեդրոնն է»:

ԻՍԿԱՊԵՍ ՍՈՒՐԻԱՆ ԹԻՐԱԽ Է

Միացեալ Նահանգները նախ ամբաստանեցին Սուրիան իրաքեան բանակին թունաւոր կազի դէմ պաշտպանուելու սարքեր (կազ մարտ) զրկած ըլլալու յանցանքով: Սուրիացիները ուրաջան ամբաստանութիւնը, սակայն, նոյնիսկ եթէ ճիշդ էր այդ ամբաստանութիւնը... ինչո՞ւ Իրաքի դրացի արաբական երկիր մը իրաւունք պիտի չունենայ իրաքի գիտնորներուն պաշտպանութեան սարքեր զրկել ամերիկեան յարձակումի մը ընթացքին, որ չունի միջազգային օրինականութիւն:

Այնուհետեւ, Սուրիա ամբաստանուեցաւ ամերիկացիներու դէմ կոտորելու համար արաբ «կամաւորներ» իրաք զրկելու կամ անոնց արտօնելու յանցանքով: Ասիկա ուրանալը դժուար է Սուրիոյ համար: Ես անձնապէս Պաղտատի մէջ հանդիպեցայ այդ կամաւորներուն, որոնք անհամբեր էին Հոմա կամ Դամասկոս իրենց տունները վերադառնալու, իսկ Ալ-Ճաբրիայէն կամ Սարոքէն եկածները ինծի ըսին, թէ ապահով կ'ըլլային, եթէ սուրիական սահմանը հասնէին, որովհետեւ «հոն ոչ մէկ հարց կար իրենց համար»:



Այդ ամբաստանութեան մէջ եւս երկու չափ երկու կշիռի հարց գոյութիւն ունի՝ տրուած ըլլալով, որ երբ Իսրայել պատերազմ կը մղէ, միշտ հարիւրները «կամաւորներ» Միացեալ Նահանգներէն թէլ Աւել կը խուժեն միանալու համար իսրայէլեան բանակին: Եւ ամերիկացիները չեն դժգոհիր այդ պարագային:

Սակայն ամենէն վտանգաւոր ամբաստանութիւնը այն է, որ Սատտամի վարչակազմին պաշտօնատարները իրաքէն փախչելով պաշտօնատանք են Սուրիոյ մէջ:

Նկատի առնելով վերջին տարիներուն Սուրիոյ մշակած սերտ յարաբերութիւնները Սատտամի ղեկավարած իրաքին հետ եւ երկու երկիրներու Պաաս կուսակցութիւններուն միացեալ ընդթել, դժուար է հաւատալ, թէ թարէք Ազիզներն ու թահա Եասին Ռամատանները չդիմեցին Սուրիոյ պաշտպանութեան:

Աւելորդ է ըսել, թէ սուրիական սահմանին մօտ Սատտամի եղբոր ձեռքակալու մը ծնունդ տուաւ պատմութիւններու սովորական ընթացքին, թէ թարէք Ազիզ եւ Սատտամի ընտանիքի կիներ կը գտնուին Լիբանանի մէջ:

Ճիշդ չէ: Բոլորովին սխալ է նաեւ այն լուրը, թէ արաբական արբանեակային սփռումներու պատկերասփիւռի կայանը Դամասկոսի մէջ հարցազրոյց մը կատարած է Իրաքի նախկին տեղեկատուութեան նախարար Մոհամէտ Սահաֆի հետ: Այդ պիտի լուրերը նաեւ կը խայտառակեն ամերիկացիները:

Անցեալին անոնք չկրցան բռնել սերպ ամենէն վտանգաւոր ոճրագործները՝ Ռատովան Քարածիւն ու Մլա-տիչը, վերջերս անոնք ձախողեցան գտնել նաեւ Ուսամա Պըն Լատինը եւ նոյնիսկ Մուլա Օմարը: Եւ ներկայիս, Պաղտատի մէջ ամերիկեան տեղեկատուութեան ձախողութիւնը տեսնելով, զարմանալի չէ ուրեմն, որ Իրաքի նախկին կառավարութեան բոլոր անդամները միասին յարգած ըլլան նարնջագոյն կրակակի մը մէջ ապահովաբար երկրէն դուրս ելլել՝ ամերիկեան ստուգման կեդրոններէն անցնելով:



Սակայն, Սուրիոյ կարգն է հիմա, ոչ թէ Սատտամի կառավարութեան անդամներուն:

ԵՒ ՆՇԱՆՆԵՐԸ ՅՍԱԿ ԷԻՆ ԵՐԿԱՐ ԱՏԵՆԷ Ի ՎԵՐ

«Նիւ Եորք Թայմզ»ին մէջ վերջերս լոյս տեսաւ յօդուած մը ստորագրութեամբ Լեբի Քոլինզի եւ «Օ Ճերուզայէմ» թերթի աշխատակից Տոմինիք Լափիէրի, որ անցեալ ամիս գրեց, թէ Սուրիոյ նեցուկը վայելող լիբանանեան Հըզպալլա կուսակցութիւնը ունի տասը հազար նոր հրթիռներ, որ կրնան արձակուել թէլ Աւելի վրայ եւ «ստեղծել այնպիսի աւեր մը, որուն նմանը Իսրայէլ չէ տեսած երբեք»: Այս հրթիռները առասպելական են: Ես երկու շաբաթ անգամ մը կ'երթեկեկեմ Հարաւային Լիբանանի ճամբաներուն վրայ եւ այդպիսի ոչ մէկ հրթիռ կայ հոն: ՄԱԿի ուժերը կրնան հաստատել այս իրողութիւնը, սակայն, ասիկա այդքան ալ կարեւոր չէ:

Քոլինզ վերոնշեալ յօդուածին մէջ կը նշէ, թէ թէլ Աւելի «Պար Իլան» համախարանի «մտաւորականները» (անյայտ) կը հաւատան, որ «Սուրիան է, եւ ոչ Իրաքը, որ ունի ամենէն արդիական քիմիական եւ կենսաբանական զէնքերը Միջին Արեւելքի մէջ»: Այո՛, շատ ճիշդ... Յետոյ պիտի ըսեն, թէ Լիպիան է կամ Մէուտական Արաբիան... կամ որեւէ այլ երկիր, գոր Իսրայէլ կ'ուզէ ոչնչացնել:

Սակայն, բանալի հարցումը տակաւին կը մնայ անպատասխան. կրնո՞ւ ըլլալ, որ Սատտամ եւ իր որդիները, թարէք Ազիզը, Ռամատան եւ մնացեալները անցած ըլլան Սուրիայէն: Անկարելի չէ. սակայն անոնց հոն մնալու արտօնութիւն ստացած ըլլալու գաղափարը անհաւատալի է: Եթէ նախագահ Պաշար Ասատ իրապէս Սատտամը իրեւ հիւր պիտի ընդունէր, այդ մէկը համազօր պիտի ըլլար իր նախագահական պալատին մէջ կամ Լուրնաբար «Քրուզ» հրթիռ ընդունելուն: Վերջապէս, երկար ժամանակ չանցաւ տակաւին այն զէնքերէն, երբ թուրքերը ճնշումներուն ենթարկուելով, Սուրիա Ռուսիա ճամբեց քիւրտ ձախակողմեան ղեկավար Ապտուլլա Օճալանը, ուրկէ վերջինս անցաւ Ափրիկէ եւ Քենիոյ մէջ ձերբակալուեցաւ ձերբակալուեցաւ կողմէ: Սակայն Սուրիա կրնայ պարզապէս տարանցիկ կանգառ մը եղած ըլլալ իրաքէն եկող «Պաաս» կուսակցութեան պաշտօնատարներուն համար:

Արդեօք դէպի ո՞ւր: Իմ ենթադրութիւնս է, թէ անոնք ուղղուած են դէպի Պիլո-ուսիա, որովհետեւ անոր մայրաքաղաք Միւսքը փախտակարաններու համար շատ մը դիւրութիւններ կ'ընձեռէ, նշանաւոր է փտածութեամբ եւ խոնակ յարկաբաժիններով (առաջին երկուքը գրաւել են իրաքի «Պաաս»ականներուն համար): Իսկայպէս, ես այս կարծիքս ծանուցեցի գործակիցներուն նախաբան իրաքի Բ. պատերազմի սկսիլը: Ցանկարծ եօթը շաբաթ առաջ, լիբանանեան «Սաֆիր» թերթին մէջ կարդացի, թէ նախագահ Լուքաշենքօ, Եուկուլուիոյ նախկին նախագահ Սլոպոտան Միլոշեւիչի հին բարեկամներէն մէկը, հրաւիրած է Սատտամի որդին՝ Ուսէյը, Միւսքի մէջ կայանալիք ճատրակի ախոյեանութեան մը ներկայ գտնուելու:

Եւ այդ օրուէն ի վեր ես մտքիս մէջ կը պատկերացընեմ, որ ամբողջ «Պաաս»ի անձնակազմը պտոյտներ կ'ընէ Պիլոուսիոյ անտառներուն մէջ. Սատտամը, որդիները, թարէք Ազիզը, Ռամատանը, Իրաքի նախկին պաշտպանութեան նախարարը եւ նոյնիսկ Սահաֆը կը պտոյտի Պիլոուսիոյ անտառներուն մէջ իրենք պետական հիւրեր:

Անշուշտ Վլատիմիր Փուտինին միջնորդութիւնը պիտի խնդրեն ամերիկացիները Սատտամը Ուաշինկթընի յանձնելու եւ անշուշտ Փուտինի զին մը պիտի պահանջէ: Վճարուելիք գինը կրնայ ըլլալ Պաղտատի մէջ քարիւղի իրաւունքներու զիջումներ Ռուսիոյ, կամ Ռուսիոյ կողմէ արդէն իսկ ստորագրուած համաձայնութիւններուն մէջ բարեփոխումներ՝ ի նպատակ այս երկրին:

ԻՐԱՔ. ԳՐԱՄԻ ԾԱՌԸ

Իրաքի ներխուժումը, գրաւումը եւ վերակառուցումը տուրք վճարող ամերիկացի քաղաքացիին պիտի արժէ աւելի քան 100 միլիարտ տոլար: Սակայն կարգ մը քաղաքացիները թուով են ներկայացնում իրաք դարձած է շահեր ապահովելու կեդրոն: Պուշի վարչակազմը սկսած է պայմանագրութիւններ կնքել կառուցման աշխատանքներ կատարող ընկերութիւններու հետ, եւ քաղաքական կապեր ունեցող ընկերութիւններ, ինչպէս՝ «Հալիպլըն», արդէն ապահոված են իրենց պայմանագրութիւնը: Ասիկա բացայայտ կողմնակալութիւն մըն է, որ կ'ակնառահարէ Պուշի վարչակազմի այն վարկածը, թէ պատերազմը ապագիւնման եւ ժողովրդավարութեան համար է, եւ ոչ՝ շահերու:

Հակառակ պատերազմի առթած սահմանափակ վնասներուն, նախորդ հարկաւորութիւնները եւ պատժամիջոցները իրաքը աւերակի վերածած են: Ճամբաներ, նահանգի ստաներ եւ դպրոցներ պէտք է վերակառուցուին, քարիւղի ճարտարապետութեան պէտք է վերակենդանացուի եւ ուժանիւթի հայտնաբերման կեդրոնները ստորագրութիւններ պէտք է տրուին անմիջապէս: Սակայն այդ չի նշանակեր, թէ մրցակցութիւն պէտք է ըլլայ անոր համար կամ թէ այս պայմանագրութեան մասին, թէ ինչո՞ւ մրցակից ընկերութիւններու առիթ է տրուած:

Միջազգային Չարգացումի Գրասենեակը իր

գրպանելով, ամերիկեան ընկերութիւններ աւելի առիթ պիտի ունենան ապագայ պայմանագրութիւնները գրպանելու: Ցառաշիկայ երեք տարիներուն վերակառուցման համար կատարուելիք ծախսերը կը նախատեսուին ըլլալ 20 միլիարտ տոլարի շուրջ:

Երբ այսքան մեծ նիւթական շահարկում պիտի ըլլայ, հարկ է որ մրցակցութիւն ստեղծուի, գործողութիւնները ըլլան թափանցիկ եւ բոլորին առիթ տրուի: Ցարգ այս բոլորը չեն կատարուած: Պատերազմի սկիզբէն քիչ ետք, բանակի ճարտարապետներու համախմբումը 2 տարուան պայմանագրութիւն մը չնորհեց «Հալիպլըն» ընկերութեան, որ 1995-2000 թուականներուն կը ղեկավարուէր Տիք Չէյնի կողմէ: Պայմանագրութիւնը կ'արժէ շուրջ 7 միլիարտ տոլար:

Պայմանագրութիւններ կնքելու վերաբերող դաշնակցային օրէնները կ'արտօնեն, որ օրէնները չըջանցուին երբ ժամանակը նեղ է կամ ազգային անվտանգութեան հարցը ունի: Այս առումով հասկնալի է քարիւղի հրկիզուած հորերու հարկաւորութեան վերաբերող դաշնակցային պայմանագրութիւն մը դժուար է հասկնալ: Քոնկրէթը պահանջած է մասնաւորապէս ընկերներ այս պայմանագրութեան մասին, թէ ինչո՞ւ մրցակից ընկերութիւններու առիթ է տրուած:

Միջազգային Չարգացումի Գրասենեակը իր

կարգին պայմանագրութիւններ կնքելու առիթ ընծայած է միայն պետութեան հետ կապեր ունեցող փոքր թիւով ընկերութիւններու, ինչպէս՝ «Պեթրոլ Կրուֆ», որուն պատասխանատուներուն կարգին է Ճորճ Շուլց, եւ «Ֆլուոր Բորփորէյլըն», որուն վերջերս հանգրտեան կոչուած գործադիր տնօրէն Փենթակոնի կողմէ կրնայ նշանակուիլ իրեւ Իրաքի քարիւղի ճարտարարուեստի պատասխանատու:

Այն ընկերութիւնները, որոնք անարդարօրէն դուրս ձգուած են, հասկընալի օրէնները չափարկուած են: Անոնց կարգին են պատերազմի ընթացքին Միացեալ Նահանգներու գլխաւոր դաշնակից Բրիտանիոյ մէջ գործող ընկերութիւնները: Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան համաձայն նման պայմանագրութիւններ պէտք է բաց ըլլան բոլոր ընկերութիւններուն, սեղական թէ օտար:

Նոյնիսկ եթէ պայմանագրութիւններ բաժնեկուայս «փակ» դասաւորուածներուն օրինական հիմք գտնուի, անոնք կը մնան անընդունելի: Իրաքի պատերազմը տեղի ունեցաւ մեծ սկզբունքներու անուանին տակ: Ցաղախանալը պէտք է վերածուի դրամական խրախճանքի մը՝ վերապահուած ընկերութիւններուն, որոնք Պուշի վարչակարգին հետ կապեր ունին:

«ՆԻ ԵՈՐՔ ԹԱՅԱՉ»

«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ի ՓԵՏՐՈՒՄ 2003Ի ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՆՆԵՐԸ

● Ալպեր Գալուստեան 20\$, տիկին Շուշան 10,000 լ.ո., փոքրիկ Զարոյ Տօվլէթեան 10,000 լ.ո., փոքրիկ Արփի Սօքիւնեան 10,000 լ.ո., Ֆիլատելֆիոյ Ա. Գրի-Լուսուորիչ Ելեղեցույ կողմէ 2,177\$, փոքրիկ Ժոն Եւ Անթօ Եուսուրթեան 60\$, Սարգիս Սարգիս Ս. Սարգիսի տօնից առիթով 500\$, ազգային մրցակցութեան 100,000 լ.ո., մը փոքրիկ Բուժման առիթով 100\$:

● ՂՈՒՆՈՑ ԲՈՅՆ Այս Մուրատեանի մահուան առիթով՝ Գէորգ Մուրատեան եւ զակակները 200\$, տէր եւ տիկին Արմէն Պուշպեան (Մոնրէալ) 100\$, տէր եւ տիկին Սիկարտ եւ Սալի Ռըվիզարտ (Մոնրէալ) 100\$, Անի Պուշպեան (Մոնրէալ) 100\$:

● ՂՈՒՆՈՑ ԲՈՅՆ Արուսեակ Կարապետեանի մահուան քառասունցից առիթով՝ տէր եւ տիկին Սարգիս Ս. Սարգիսի տօնից առիթով 500\$, ազգային մրցակցութեան 100,000 լ.ո., մը փոքրիկ Բուժման առիթով 100\$:

Տէր եւ տիկին Վիգէն Կարապետեան 60 եւրօ: Ազգային մը 55,000 լ.ո., Զլօէ Մանուկեան 150,000 լ.ո., փոքրիկ Սագո Չափաեան 15,000 լ.ո., փոքրիկներ Զայլ եւ Առի Ճեմաեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Սարգիս Էրզրումեան 20,000 լ.ո., փոքրիկ Մեղրի Շերպեան

եան 10,000 լ.ո., փոքրիկ Զարոյ Տօվլէթեան 10,000 լ.ո., փոքրիկ Արփի Սօքիւնեան 10,000 լ.ո.,

● ՂՈՒՆՈՑ ԲՈՅՆ Արուսեակ Կարապետեանի մահուան քառասունցից առիթով՝ տէր եւ տիկին Սարգիս Ս. Սարգիսի տօնից առիթով 500\$, ազգային մրցակցութեան 100,000 լ.ո., մը փոքրիկ Բուժման առիթով 100\$:

● ՂՈՒՆՈՑ ԲՈՅՆ Այս Մուրատեանի մահուան առիթով՝ Գէորգ Մուրատեան եւ զակակները 200\$, տէր եւ տիկին Արմէն Պուշպեան (Մոնրէալ) 100\$, տէր եւ տիկին Սիկարտ եւ Սալի Ռըվիզարտ (Մոնրէալ) 100\$, Անի Պուշպեան (Մոնրէալ) 100\$:

● ՂՈՒՆՈՑ ԲՈՅՆ Արուսեակ Կարապետեանի մահուան քառասունցից առիթով՝ տէր եւ տիկին Սարգիս Ս. Սարգիսի տօնից առիթով 500\$, ազգային մրցակցութեան 100,000 լ.ո., մը փոքրիկ Բուժման առիթով 100\$:

Տէր եւ տիկին Վիգէն Կարապետեան 60 եւրօ: Ազգային մը 55,000 լ.ո., Զլօէ Մանուկեան 150,000 լ.ո., փոքրիկ Սագո Չափաեան 15,000 լ.ո., փոքրիկներ Զայլ եւ Առի Ճեմաեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Սարգիս Էրզրումեան 20,000 լ.ո., փոքրիկ Մեղրի Շերպեան

2 սնտուկ հազար, 2 սնտուկ լոյկ, 5 սնտուկ Գարից-Մանուկեան, 1 սնտուկ ստեպլից, 2 սնտուկ սոխ, կէս սնտուկ վարուց, 1 պտիկ պարկ շոգամ, 2 պտիկ պարկ ճակնդեղ, տիկին Արփի Առաքելեան եւ զակակներ 1 թիթեղ պանիր, ազգային մը 4 1 տուփ կրկնեփ եւ տուրմ, ազգային մը 1 պարկ ալիւր, Ֆարէ Աուց 2 սնտուկ «Փիքըն» պանիր, Պուրճ 2 սնտուկի Զաղաքապետարան 5 սնտուկ կանաչեղէն, 1 պտիկ պարկ սոխ, 2 սնտուկ ծաղկակաղամբ, 3 սնտուկ Գարից, 3 սնտուկ գետնախնձոր, 1/2 սնտուկ վարուց, 28 հատ հնդկընկոյզ, 1/2 սնտուկ ճակնդեղ, ազգային մը 13 բաքէթ/500 կր./իտալական խաւով մաքարոնի, ազգային մը 36 բաքէթ/500 կր./իտալական խաւով մաքարոնի, ազգային մը տուփ/բլ./«Զոր» Ֆլէքս, 12 քարթոն հաւկիթ, 5 բաքէթ/200 կր./ սուրճ, Անթօ Պուշպեանի-Սեւան Սկաուտական 2 արթու մը 680 մսաշոք եւ 300 հատ թան, Ներսէս Պուստընեան 600 հատ գուլուր մը, Պուրճ 2 սնտուկի «Ֆայլ» տէր եւ տիկին Զաղաքապետարան 1 սնտուկ կիտրոն, 8 սնտուկ կանաչեղէն, 2 իկ:

www.hamazkayin.com

ՀԱՅԿԱՉԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՍՄՊՈՆՆԵՐ
ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՎԵՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՍԻԻԺԵԱՆ ԵՒ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ ՏԱՐԱԳՐԵԱԼՆԵՐՈՒՄ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՄԵԾ ԵՂԵՆԻ ՕՐԵՐՈՒՄ (Անգլերէնով)

Դասախօս ՀԻԼՍԱՐ ՔԱՅՉԵՐ (Գերմանիա)

Տեղի կ'ունենայ Ընդառաջ, 1 Մայիս 2003 ժամը 7:30ԳՆ, Հայկազեան Համալսարանի հանդիսարանին մէջ, Մէքսիկեան շէնք, Մեքսիկե փողոց:

ԻՐԱՔԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Իրաք, իբրև օսմանեան երկրամաս, սկսաւ զարգանալ ու բարգաւաճիլ ԺԹ. դարու կէսերէն եւ այնուհետեւ միջազգային քաղաքական շարքերու թիւններու մէջ յատուկ ուշադրութեան արժանացաւ Պերլին-Պաղատ երկաթուղիի կառուցման եւ Քերքուքի մէջ քարիւղի յայտնաբերման պայմաններուն տակ: Առաջին Աշխարհամարտի աւարտին Իրաք օսմանեան գերիխանութենէն ազատագրուեցաւ եւ դարձաւ թագաւորութիւն՝ Բրիտանիոյ հովանաւորութեան տակ:

ԻՐԱՔԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ

Օսմանեան կայսրութեան կազմին մէջ Իրաք սկսաւ զարգանալ ԺԹ. դարու կէսերէն. արդարեւ, 1835ին Տիգրիսի եւ Եփրատի վրայ նաւային երթեւեկի դրուածիւն հաստատուեցաւ, 1860ին հեռագրական գիծեր հաստատուեցան Պաղատի եւ Պոլսոյ միջեւ, իսկ 1880ական տարիներուն նամակաբաշխութեան դրուածիւն հաստատուեցաւ: Միաժամանակ ճամբաներ կառուցուեցան, իսկ գերմանացիք Պաղատ-Սամարրա մայրուղիին կառուցեցին Առաջին Աշխարհամարտի նախօրեակին:

Իրաք սկսան թափանցել կաթոլիկ եւ բողոքական միսիոնարներ, որոնք համայնքներ կազմեցին, եկեղեցիներ հիմնեցին եւ դպրոցներ բացին: Սակայն, ընդհանուր առմամբ կարելի է ըսել, որ միսիոնարները յարաբերաբար աւելի ենթահոգեզուտան Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղատի մէջ, մինչ Իրաքի մէջ աւելի սահմանափակ գործունէութիւն ունեցան, որովհետեւ Իրաքի քրիստոնեաները աւելի առանձնացած էին եւ հիմնական ուժ չէին ներկայացնէր: Կազմակերպուեցան նաեւ հրեաները, որոնք 1865ին Իսրայէլի Տիեզերական Դաշնակցութիւնը կազմեցին եւ Պաղատի մէջ բարձրագոյն կարգի դպրոց բացին:

ՄԻՏԿԱԹ ՓՈՒՇԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Իրաք մեծապէս զարգացաւ յատկապէս Միտ-հաթ փաշայի կառավարչութեան շրջանին (1862-1872): Օսմանեան կայսրութեան զլխաւոր ճարտարապետներէն եւ նախապէս մեծ ներդրում ունեցած Պալքանեան Թունա վիլայէթի գարգացման մէջ, ան հիմնական վերակառուցման ենթակայեց Պաղատը, հանրակառուցի դրուածիւն հաստատեց Քազիմայի մէջ, հանրային պարտէզ, ջրամատակարարման դրուածիւն, հիւանդանոց, հիւսուածեղէնի գործարաններ եւ դրամատուն հաստատեց, իսկ Տիգրիսի վրայ առաջին կամուրջը եւ լայն պողոտաներ կառուցուեցան: Բազմաթիւ նոր դպրոցներ բացուեցան եւ նոր դասագիրքեր ստուգեցան իր հիմնած տպարանին մէջ եւ Իրաքի առաջին օրաթերթը «Ջաուրա» սկսաւ հրատարակուիլ: Տնտեսութիւնը իր կարգին սկսաւ բարգաւաճիլ, Եփրատի, Տիգրիսի, Պարսից ծոցի եւ Պասրայի միջեւ նաւային երթեւեկի դրուածիւն հաստատուեցաւ, ոռոգումի դրուածիւնը կանոնաւորուեցաւ եւ ամէնուրեք արմաւենիի մշակութիւնը լայն տարածուեց: Միաժամանակ հողային բարենորոգումներ կատարուեցան:

Միտհաթ փաշա աշխատեցաւ խաղաղութիւն հաստատել ցեղախումբերուն միջեւ եւ թափառաշրջիկները նստակեաց դարձնել ու քաղաքակրթել: Բազմաթիւ շէյխեր, որոնք մեծ հողատէրեր էին եւ մօտիկ օսմանեան կառավարութեան, զօրավիգ կանգնեցան իրեն: Թափառաշրջիկները, որոնք բնակչութեան մօտաւորապէս 35-40 առ հարիւրը կը կազմէին, աստիճանաբար նստակեաց դարձան, եւ Օսմանեան կայսրութեան քայքայման նախօրեակին թափառաշրջիկները բնակչութեան մօտաւորապէս մէկ-հինգերորդը կը կազմէին:

Իբրեւ Պաղատի վայրի եւ վեցերորդ բանակի հրամանատար՝ Միտհաթ փաշայի իշխանութիւնը կը տարածուէր Մուսուլի, Քերքուքի, Միւլէյմանիէի, Պասրայի եւ Հասայի վրայ: Ան անձնապէս շրջագայեցաւ Քուէյթի, Հասա եւ Աջուտ ընտանիքին հետ կապեր հաստատեց, որպէսզի օսմանեան գերիխանութիւնը տարածուի ուսահայիթ երկրամասերուն՝ Նեճտի եւ շրջակայքին վրայ:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԽՍՈՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ՄՐՅԱՎՈՒՄՆԵՐ

Օսմանեան կառավարութիւնը ԺԹ. դարու վերջաւորութեան Իրաքը վարչական նոր բաժանումներու ենթակայեց եւ Պասրա (կ'ընդգրկէր Հասա սանճագը) ու Մուսուլ (անոր կապուած էին Քերքուք եւ Միւլէյմանիէ սանճագները) վիլայէթները Պաղատի վիլայէթէն անկախ դարձան: Այս ժամանակ ալ Քերքուքի թուրքմէն, ինչպէս նաեւ կովկասցի ընտանիքներ պետական բարձր դիրքերու տիրացան:

Արարական զարթոնքի պայմաններուն տակ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄՈՎ՝ ԻՐԱՔԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄ

ազգայնականներ սկսան կազմակերպուիլ եւ քարոզչութեան ձեռնարկեցին օսմանցիներուն դէմ պայքարի առաջադրանքով, բայց Իրաքի բնակչութեան մեծամասնութիւնը անգրագէտ ըլլալով՝ չյաջողեցան մեծ ուշադրութիւն կեդրոնացնել հոն:

Օսմանեան կայսրութեան մէջ 1908ին սահմանադրութիւն հռչակուեցաւ, որմէ ետք Սուրիոյ ազգայնականները առանձին կազմակերպութիւն հիմնեցին, իսկ Իրաքի մէջ կազմուեցաւ Ահտ ընկերութիւնը, որ մեծ մասամբ բանակին արար սպաներէ եւ պետական պաշտօնեաներէ բաղկացած էր, որ սակայն միայն վարչական ինքնորոշման իրաւունք կը հետապնդէր կայսրութեան արարական նահանգներուն մէջ:

Իրաք բրիտանական եւ գերմանական մրցադաշտի վերածուեցաւ, որոնցմէ իւրաքանչիւրը աշխատեցաւ ազդեցութեան գօտիներ տարածել: Գերմանիոյ նպատակն էր Միջագետքէն Հնդկաստան ճամբայ բանալ եւ այդ ուղղութեամբ Բրիտանական կայսրութեան ճամբան կտրել, մինչ Բրիտանիա ամէն ջանք կը թափէր պայտօլ պահելու համար Հնդկաստանի ճամբան: Միաժամանակ Քերքուքի մէջ քարիւղի հանքեր յայտնաբերուեցան, ինչ որ աւելի սրեց Իրաքի նկատմամբ հետաքրքրութիւնը: Երիտասարդ թուրքերու կառավարութեան հակութեամբ Գերմանիա ձեռնարկեց Պերլին-Պաղատ երկաթուղիի կառուցման, իսկ 1912ին Բրիտանիա, Գերմանիա եւ Հոլանտա կազմեցին Թրքական քարիւղի ընկերութիւնը:

ԻՐԱՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԼՈՒԾԵՆ

Առաջին Աշխարհամարտի բռնկումէն ետք, 29 Հոկտեմբեր 1914ին Օսմանեան կայսրութիւնը Գերմանիոյ եւ Աւստրիո-հունգարիոյ կողքին պատերազմին մէջ մտաւ ընդդէմ դաշնակից երկիրներուն՝ Իտալիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի: Բրիտանական ուժեր, որոնք Պարսից ծոցին մէջ խարխաւ հաստատած էին, Միջագետքի կողմէն ճա-




Պաղատ

կատ բանալով՝ 22 Նոյեմբեր 1914ին Պասրա մտան:

Արաք ազգայնականներ, արարական աշխարհի ազատագրութեան առաջադրանքով գէնք բարձրացուցին օսմանեան տիրապետութեան դէմ եւ կապեր հաստատեցին դաշնակիցներուն հետ: Մեքէի իշխան շարիֆ Հիւսէյն պրն Ալիի գաւազը՝ շարիֆ Պասրայի ղեկավար դերակատարութիւն ստանձնեց, մանաւանդ որ ան պետական ուղղակի հակակշիռի ենթակայ չէր եւ շարժումի ազատութիւն ունէր: Պասրայ 1915ին շրջագայեցաւ դէպի Դամասկոս եւ ապստամբութեան համար նախապատրաստական աշխատանք տարաւ: Անգլիացի Մաքս եւ Ֆրանսացի Փիքո 9 Մայիս 1916ին իրենց միջեւ Օսմանեան կայսրութեան հետագայ բաժանումը կատարեցին, որուն հիմամբ արարական երկիրները Ֆրանսական եւ բրիտանական գօտիներու պիտի բաժնուէին: Նոյն օրերուն, 1916ին արարական յեղափոխութիւնը բռնկեցաւ, եւ շարիֆ Պասրայ պրն Հիւսէյն ստանձնեց զինուորական հրամանատարութիւնը. օսմանեան բանակի սպայ Նուրի Սալիտ, որ գերի ինկած էր բրիտանացիներուն ձեռքը, միացաւ արարական բանակին եւ էմիր Պասրայի գլխաւոր ղեկավարութեան դարձաւ:

Բրիտանական ուժեր իրաքեան ճակատի վրայ յառաջադրեցին շարունակելով՝ 1916 Ապրիլին ծանր պարտութիւն մը կրած էին Բուսայ Ամարայի մէջ, բայց յետոյ վերակազմակերպուելով եւ արարական ուժերու հետ միասնաբար քայլեցին Պաղատի վրայ եւ 11 Մարտ 1917ին գրաւեցին գայն: Գրաւուած շրջաններուն մէջ բրիտան-



Ճաք էլ Արապ, ուր Եփրատ եւ Տիգրիս կը միանան Իրաքու

նական եւ հնդկներէ բաղկացած վարչակազմը փոխարինեց օսմանեան պետական պաշտօնէութիւնը: Միայն Մուսուլի նահանգը մինչեւ պատերազմին աւարտը մնաց թրքական գօտիին մէջ:

Արարական ուժեր 1918 Սեպտեմբեր 30ին մտան Դամասկոս, որմէ ետք էմիր Պասրայ Սուրիոյ թագաւոր հռչակուեցաւ, իսկ իրաքի ազգայնականներ առաջարկեցին, որ անոր եղբայր՝ Ապտալի Իրաքի թագաւոր ըլլայ: 30 Հոկտեմբեր 1918ին, երբ արդէն բոլոր ճակատները քայքայուած էին, Թուրքիա անձնատուր եղաւ:

ԻՐԱՔ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ


Պատերազմի աւարտէն ետք, 1919ին բացուեցաւ Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը, որուն իրրեւ արարներու գլխաւոր ներկայացուցիչ՝ մասնակցեցաւ էմիր Պասրայ: Մուսուլ, Պաղատա եւ Պասրա նահանգները միացուեցան եւ կազմուեցաւ Իրաքը:

էմիր Պասրայ 1920 Յունուարին Դամասկոս վերադարձաւ, որմէ ետք Ֆրանսական ուժեր մտան Դամասկոս: Սուրիոյ մէջ ազգայնականներ սաստկացուցին Ֆրանսացիներուն դէմ պայքարը, բայց հալածուեցին իրաք եւ ցեղախումբային շրջաններ հաստատուեցան:

Միաժամանակ 1920ի ամբարան յեղափոխութիւն մը բռնկեցաւ Իրաքի մէջ, որ ընդգրկեց գլխաւոր քաղաքները՝ Մուսուլ, Պաղատա եւ Պասրա, ուր բրիտանական ուժեր տեղակայուած էին:

Նոյն օրերուն, 1920 Յունուարին էմիր Պասրայ Ֆրանսացիներուն հակադրուեցաւ Սուրիոյ վրայ գերիշխանութեան հարցով: Ֆրանսա Սուրիոյ եւ Լիբանանի վրայ հողատարութիւն հաստատելով՝ վերջ տուաւ Լոնտոն ապստանեցաւ:

Իրաքի մէջ յեղափոխութիւնը զինու զօրութեամբ զսպուեցաւ, բայց իրաքցի ազգայնականներ անկախութիւն պահանջեցին: Բրիտանիա 1921 Մարտին Իրաքի գահը Պասրայի յանձնեց,



Ասորիներուն Մար Մաթթա վանքը

որպէսզի արարական կառավարութիւն մը հաստատուի Բրիտանիոյ հովանաւորութեան տակ: Պասրայ ընդունեց գահը, բայց պայմանաւ որ իրաքի ժողովուրդը ընդունի գինք եւ բրիտանական հովանաւորութիւնը պահելով մը փոխարինուի: Բրիտանիա ընդունեց եւ Ուիլիսթըն Չըրչիլ՝ զազմութիւն քարտուղարը, խոստացաւ

իրագործել համաձայնութիւնը:

Անմիջապէս Չըրչիլի նախագահութեամբ համագումար մը կազմակերպուեցաւ Գահիրէի մէջ, Միջին Արեւելքի հարցով: Յայտալ ընդունուեցաւ իբրեւ Իրաքի թագաւոր, եւ սուր Փըրսի Քոքս իրաքի բարձր կոմիսար նշանակուեցաւ: 11 Յունուար 1921ին Պասրայ թագաւոր հռչակուեցաւ եւ 23 Օգոստոսին օծուեցաւ:

Իրաքի եւ Բրիտանիոյ միջեւ 10 Օգոստոս 1922ին դաշինք կնքուեցաւ, որուն համաձայն, Իրաքի մէջ կրօնական հակասութիւն կը հռչակուէր, եւ Բրիտանիա կը ստանձնէր երկրին արտաքին, պաշտպանութեան, զինուորական, դատական եւ ելեւմտական պարտաւորութիւնները: Ըստ համաձայնութեան, դաշինքը պարբերաբար պիտի վերանայուէր: Բրիտանիա պարտականութիւն ստանձնեց նաեւ Իրաքը Ազգերու Դաշնակցութեան անդամ դարձնելը:

Դաշինքին ստորագրութեանէն ետք անոր դէմ զօրաւոր ընդդիմութիւն մը ծայր առաւ Իրաքի մէջ, ինչ որ ստիպեց բրիտանական կառավարութիւնը 30 Ապրիլ 1923ին նոր դաշինք կնքուի, որուն համաձայն, չորսէն քսան տարին անգամ մը անկախ պիտի վերանայուէր:

Այնուհետեւ սահմանադրական յանձնախումբ կազմուեցաւ, որ լայն իրաւասութիւններ տուաւ թագաւորին. սահմանադրութիւնը ընդունուեցաւ 1924 Յունուարին: Հաստատուեցաւ սահմանադրական միապետութիւն, խորհրդարան, դատական մարմին, այնուհետեւ՝ նշանակովի ձեռնարկուեց: Խորհրդարանական առաջին ընտրութիւնները կատարուեցան 1925ին: Հիմնուեցան նաեւ քաղաքական երեք կուսակցութիւններ:

Վարչապետ Նուրի Մալիտի կառավարութեան օրով, 30 Յունուար 1930ին նոր սահմանադրութիւն հաստատուեցաւ, որուն համաձայն, բրիտանական հողատարութիւնը պիտի վերցուէր, բայց երկու երկիրներուն միջեւ յատուկ դաշնակցութիւն մը պիտի հաստատուէր: Բրիտանական օդուժի խարխսններ հաստատուեցան Պասրայի մէջ եւ Եփրատէն արեւմուտք:

Նոյն օրերուն քիւրտերը, շէյխ Մահմուտ Պարզինճայի գլխաւորութեամբ ապստամբեցան ինքնավարութեան պահանջով, բայց զսպուեցան: Միաժամանակ ազգայնականներ ձայն բարձրացուցին ամբողջական անկախութեան պահանջով՝ ըսելով, որ Իրաքի մէջ երկու կառավարութիւն կայ, որոնցմէ մէկը՝ օտար:

ԻՐԱՔ ԱՆԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Հողատարութեան ժամանակաշրջանը աւարտած ըլլալով՝ Իրաք 1932ին անկախութիւն հռչակեց: Գործող քաղաքական կուսակցութիւնները լուծուեցան, որովհետեւ այլեւս անոնց գոյութեան հիմ չէր մնար: Նոյն օրերուն քիւրտերը շէյխ Ահմատ Պարզանիի գլխաւորութեամբ ապստամբութիւն բարձրացուցին, բայց պարտուեցան: 3 Հոկտեմբեր 1932ին Իրաք Ազգերու Դաշնակցութեան ներկայացաւ իբրեւ անկախ պետութիւն:

Քաղաքական ղեկավարներու միջեւ պայքարին պատճառով վարչապետ Նուրի Մալիտ փոխարինուեցաւ, եւ ընդդիմադրութեան ղեկավար Ռաշիտ Ալի Ղալանի նոր կառավարութիւն կազմեց:


Ներքաղաքական պայքարը իր գագաթնակէտին հասաւ 1933ին, ասորեստանցիներու ապստամբութեան պատճառով: Ասորեստանցիք ապահովութեան երաշխիք ստացած էին թէ՛ Բրիտանիայէն եւ թէ՛ Իրաքէն: Երբ հողատարութեան շրջանը աւարտեցաւ անոնք նոր երաշխիքներ եւ Մուսուլի նահանգը պահանջեցին: Պասրայ թագաւոր Եւրոպայէր 1933ի ամրան, երբ ասորեստանցիք ապստամբեցան: Ընդդիմադիրներ զօրակցութիւն յայտնեցին անոնց: Իրաքեան բանակը միջամտեց. բազմաթիւ աշուրիներ սպանուեցան, բազմատասնեակ գիւղեր քանդուեցան, ցեղապետներ ու շատեր հեռացան Իրաքէն: Ասորեստանցիներու ապստամբութեան պատճառով վարչապետ Ռաշիտ Ալի Ղալանիի կառավարութիւնը հրաժարուեցաւ:

Իրաք Ազգերու Դաշնակցութեան ղիմեց ըսելով, որ պիտի յարգէ փոքրամասնութիւններուն իրաւունքները: Պասրայ թագաւոր վերադարձաւ Իրաք, կացութիւնը հակակշիռի տակ առաւ, բայց քանի մը օր ետք, հիւանդութեան պատճառով Չուիցերիա մեկնեցաւ, ուր 8 Սեպտեմբեր 1933ին մահացաւ:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
 -Ա.Զ.Մ.Ա.Կ-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերով:- 258526, 260115 եւ 241274:

Մ Ա Ր Չ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՓԻՆԿ ՓՈՆԿ

Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՂՋԿԱՆՑ ՅԱԶՈՂ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի փինկ փունկի աղջկանց խմբային ախոյեանություն մրցաշարքին, որ տեղի կ'ունենայ Մոն Լա Սալի մէջ, Հ. Մ. Ը. Մ. Պէյրուսի աղջիկները արձանագրեցին երկու յաղթանակ, յաջորդաբար պարտութեան մատնելով Ժամհուրը (3-0) եւ Շապապ Չուքը (3-0): Առաջին մրցումին, անոնք նոյն արդիւնքով պարտութեան մատնած էին Մար Եուսէֆ Ընէթ Շահուանը:

Երկրորդ մրցումին, Մոն Լա Սալի մէջ սկսաւ Լիբանանի փինկ փունկի գարնանային տարիքային մրցաշարքը, մասնակցութեամբ բազմաթիւ պարտութեան: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ՝ Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս եւ Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս (տղաք եւ աղջիկ): 92-93ի ծնունդ դասակարգին մէջ, Աւո Մունչողլեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս), Հրակ Պետոյեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի), Արմէն Պաքճեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի) եւ Վարանդ Պոյաճեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) երկուքական յաղթանակ արձանագրեցին: Իսկ Վարանդ Մուսաբաբ Պանունը եւ Ալի Մոհամէտ Քասբուրը: Վերոնշեալ ութ մրցումներն ալ վերջ գտան 2-0 արդիւնքով:

Կիսաւարտականի մրցումներուն, Աւո 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Հրակը, իսկ Արմէն՝ Վարանդը (2-0):

Աւարտականին, որ տեղի ունեցաւ Աւոյի եւ Արմէնի միջեւ, Աւո 2-0 արդիւնքով պարտութեան մատնելով Արմէնը, հանդիսացաւ 2003ի 92-93ի ծնունդ դասակարգին մէջ գարնանային տարիքային մրցաշարքի ախոյեան:

88-89ի ծնունդ դասակարգին մէջ Հրակ Մանուէլեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) յաջորդաբար պարտութեան մատնել է ետք Ռաւէլ Ճալատը (2-0), Ռալֆ Հըրմէշը (2-0) եւ Մոհամէտ Հըմէտին (2-1) ապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տոմսը: Դժբախտաբար սակայն, ան չկրցաւ հասնիլ աւարտական հանգրուան, կիսաւարտականին 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրելով, ետք Էլի Լըթէյֆէն:

88-89ի ծնունդ դասակարգին մէջ Դուին - Քարոլ Մունչողլեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս) 2-0 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Քարոլ Նատերը, ապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տոմսը, նկատի ունենալով որ այս դասակարգին մէջ իրենց մասնակցութիւնը կը բերին ութ աղջիկներ: Կիսաւարտականին Դուին 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրելով Թայա Հաւիլիէն, մրցաշարքը աւարտեց 3րդ դիրքին վրայ:

Այսօր՝ Չորեքշաբթի, ժամը 5:30էն սկսեալ տեղի կ'ունենան 86-87ի եւ 90-91ի ծնունդ մրցումները:

86-87ի ծնունդ դասակարգին մէջ, Հրայր Պողոսեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) կը մրցի Մոհամէտ Պանունի դէմ, Սերոժ Չամիչեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս)՝ Նապիլ Արմէնի դէմ, իսկ Ժայլ Թաւիլի (Հ. Մ. Ը. Մ. Պէյրուս)՝ Հըմէլ Աթթարի դէմ:

90-91ի ծնունդ դասակարգին մէջ այսօր մրցումներ կը կատարեն նաեւ Հայկ Խաչէրեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի), Արամ Մանուէլեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) եւ Սահակ Պալեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի):

ՎԱՂԸ՝ Հ.Մ.Ը.Մ. - ՇԱՊԱՊ ՍԱՀԷԼ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Պատրաստուելու համար, Երեքշաբթի, 6 Մալիսին տեղի ունենալիք Լիբանանի ֆուտբոլի բաժնի մրցաշարքին երթի քառորդ աւարտականին Ահտի դէմ իր կատարելիք մրցումին, Հ. Մ. Ը. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը, վաղը՝ Հինգշաբթի, բարեկամական մրցում մը պիտի կատարէ Շապապ Սահէլի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Պուրճ Համուտի Քաղաքայեան արանի դաշտին վրայ, կէսօրէ ետք ժամը 4:30ին:

ԱՅՍՕՐ՝ ՀԻՆԳ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Այսօր՝ Չորեքշաբթի, տեղի պիտի ունենան Եւրօ-2004ի գտումի հինգ մրցումներ, ինչպէս նաեւ ֆուտբոլի միջազգային բարեկամական 21 հանդիպումներ:

Եւրօ-2004ի գտումի այդ հինգ մրցումներէն երկուքը տեղի պիտի ունենան Ա. խմբակէն ներս, մէկը՝ Դ. խմբակէն ներս, մէկը՝ Ը. խմբակէն ներս եւ վերջապէս վերջինը՝ Ժ. խմբակէն ներս:

Ժ. խմբակէն ներս տեղի ունենալիք մրցումը՝ Վրաստանի եւ Ռուսիոյ միջեւ, վերջինին համար պիտի ըլլայ կարեւոր, որովհետեւ յաղթանակի մը պարագային Ռուսիա պարագլուխի դիրքը պիտի խլէ Չուիցերիայէն, մէկ կէտի առաւելութիւն մը ունենալով անոր վրայ: Անկկատեղի պիտի ունենայ դրնփակ:

Այսօր տեղի ունենալիք այդ 21 մրցումներէն ոմանք պիտի ըլլան բաւական տարձակատումներ: Անոնց շարքին են՝ Ֆրանսա - Եգիպտոս, Չուիցերիա - Իտալիա, Հոլանտա - Փորթուգալ, Շուէտ - Խրուաթիա, Մեքսիքա - Պրայիլի եւ վստահաբար այլ ճակատումներ ալ:

Անկասկած, որ բոլորին աչքերը ուղղուած պիտի ըլլան «Մէլթը Տընի»ի մէջ տեղի ունենալիք մրցումին, ոչ թէ անոր համար, որ Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբին մրցակիցը Եգիպտոսն է, այլ որովհետեւ Չելսիի վերջերս յետապահ Մարսել Տըսայի իր երկրին ֆուտբոլի ազգային խումբին հետ պիտի հաստատեն նոր մրցանիշ մը, 104րդ անգամ ըլլալով կրելով անոր թշափկը: Նշենք, թէ այժմ ան Տիտիէ Տեշանի հետ միասին կը բաժնեկցի այդ մրցանիշը:

Միւշ Տըսայի պիտի փորձէ Ֆրանսայի հետ նոր մրցանիշ մը հաստատել, անդին անոր խմբակիցներ՝ Չինետին Չիտան, Բլոտ Մաքելեյէ (Ռէյալ Մատրիտ) ինչպէս նաեւ Լիլիան Թիւրամ (Եուրօ-2004ի գտումի պիտի բացակային Ֆրանսայի կազմէն, նկատի ունենալով որ անոնց պարտութիւնը կը մասնակցի «Չելսի»ի մէջ ֆուտբոլի մրցաշարքին:

Աշխարհի ախոյեան Պրայիլի, Կուստալիա խմբային մէջ հիւրը պիտի ըլլայ Մեքսիքայի: Պրայիլիէն պիտի բացակային Ռուպերթո Քարլոս (ՅիՅԱի)



Մարսել Տըսայի



Ռուպերթո

կողմէ կախակայումս, Քաֆու եւ Ռիվայտո: Այս վերջինին բացակայութիւնը լուսաւորի առիթը պիտի ըլլայ 19 տարեկան Ռուպերթո Սուլայի (ճանչցուած՝ Ռուպերթո անուանով), որ առաջին անգամ ըլլալով նկատի առնուի իր մարզիչին՝ Քարլոս Ալպերթո Փարէյրայի կողմէ:

Եւրօ-2004ի ֆուտբոլի մրցաշարքը հիւրընկալող Փորթուգալ, որ անցեալ ամիս պարտութեան մատնեց Պրայիլի, Այնտիվընի մէջ հիւրը պիտի ըլլայ Հոլանտայի: Իտալիա ժընեի մէջ կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրը ըլլայ Չուիցերիոյ, մինչ այլ հետաքրքրական հանդիպում մը կը կարծուի ըլլայ Մոլիայի մէջ տեղի ունենալիք մրցումը, ուր Շուէտ պիտի հիւրընկալէ Խրուաթիան:

Ստորեւ՝ Եւրօ-2004ի գտումի հինգ մրցումներուն, ինչպէս նաեւ ֆուտբոլի միջազգային բարեկամական 21 մրցումներուն յայտագիրը:

●ԵՐՕ-2004Ի ՉՏՈՒՄ Ա. ԽՄԲԱԿ (Թաքալի) Իտալիա - Կիպրոս (Փայերմո) Դ. ԽՄԲԱԿ Լաքլիա - Սան Մարինո (Ռիկա) Ը. ԽՄԲԱԿ Անտորրա - Էսթրալիա (Անտորրա)

Ժ. ԽՄԲԱԿ Վրաստան - Ռուսիա (Թիֆլիս)

●ՅՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Ֆրանսա - Եգիպտոս (Մէլթ Տընի)

Պէլճիքա - Լեհաստան (Պրիբուէլ)

Չեխիա - Ֆրանսա (Փրակա)

Դանիա - Ուքրաինա (Քոփենհակըն)

Գերմանիա - Սերպիա (Պրեկըն)

Հունգարիա - Լուքսեմպուրկ (Պուտալէշթ)

Ալբեր - Նորվեգիա (Տապիլի)

Չուիցերիա - Իտալիա (ժընե)

Լիպիա - Արժանթին (Թրիփոլի)

Մարոք - Փղոսկըրեայ Ափունց (Ռապաթ)

Հոլանտա - Փորթուգալ (Այնտիվըն)

Սլովակիա - Աստրիա (Կլաւսթ)

Սլովակիա - Յունաստան (Պրաթիսլա)

Հարաւային Ափրիկէ - Ժամայքա (Բէյթ Թաուն)

Սպանիա - Էքուատոր (Մատրիտ)

Շուէտ - Խրուաթիա (Սոլնա)

Ռուպերթոս - Պիլիպին (Թաշկէն)

Մեքսիքա - Պրայիլի (Կուստալիա)

Ռուսիա - Սենեկալ (Թունուլ)

Հոնտուրաս - Բոլիւիա (Մալմո)

Չիլի - Բուրնա (Սանթիակո)

ԹՈՒՐԿԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ
արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարէհի հետ տեսակցութեան մը ետք, մամլոյ սաւաղիսի մը ընթացքին անոնք ըսած են, թէ Սուրիա եւ Թուրքիա կոչ կ'ուղղեն անորոց ժողովուրդը ներկայացրեալ իրաքեան կառավարութեան մը շուտափոյր կազմութեան:

Շարէհ յայտնած է, որ Իրաքի ընկերութեան բոլոր հատուածները ներկայացնող ընտրեալ կառավարութեան մը հաստատումը «ժողովուրդին գլխաւոր պահանջն է, սակայն դժուար պիտի ըլլայ այդ թիրախը իրականացնել՝ գրաւող ուժերու ներկայութեան», աւելցուցած է ան:

Կիւլ շեշուած է, որ Իրաք կարիքը ունի «քաղաքային կառավարութեան մը, որ պէտք է ընդգրկէ բոլոր համայնքները, ներառեալ թուրքմէնները, քիւրտները եւ արաբները»:

Իրաքի նման, Սուրիա եւ Թուրքիա քիւրտ փոքրամասնութիւններ ունին եւ անոնք մտահոգութեամբ կը մտնեն իրենց սահմանակից քրտական ինքնավար պետութեան մը ստեղծումին կարելիութեան:

«Քիւրտները նման կառավարութեան մը ձամբով պէտք է աշխատին», շեշտած է Կիւլ, քննադատելով հիւսիսային Իրաքի մէջ «պիւնեալներու անընդունելի ներկայութիւնը»:

Ան աւելցուցած է, որ Մ. Նահանգները չեն ընդդիմանար Իրանի, Սուրիոյ եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութեան կարգաւորման: «Ընդհակառակն, նման յարաբերութիւններ պիտի օժանդակեն շրջանային շարք մը հարցերու լուծման», ըսած է Կիւլ:

ՌԱԶԵՆԿԱԿԱՆ - ԴԱՍԱՍԿՈՍ ԱՐՈՒՍՈՒԹԵԱՆ ԳԾՈԿ

Միւս կողմէ, Ուաշինկթըն - Դամասկոս նորագոյն յարաւորութիւնը մեղմացնելու նպատակով, Շարէհ յայտնած է, թէ իր երկիրը չ'ուզէ Իրաքի ներքին հարցերուն միջամտիլ ըլլալ, «թիրախացութիւն» կոչելով Մ. Նահանգներու հետ նորագոյն այդ յարաւորութիւնը: Ատոր պատճառը, ըսած է ան, Միացեալ Նահանգներու «Միջին Արեւելքի պատմութեան ծանօթ ըլլալն է»:

ՎԱՐՉԱՊԵՏ ԱՊՊԱՍ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

Վարչապետը խոստացաւ նաեւ ներող ըլլալ ապահովութեան ուժերուն հետ, եթէ անոնք խախտումներ կատարեն: Ան աւելցուց, որ կառավարութիւնը աչք պիտի չիքէ նաեւ վարչապետին հարող երեւոյթներու: Այս մէկն ալ խորհրդեան պահանջ մըն է՝ յաղաղութեան գործընթացին վերսկսելու համար: Ապպաս կոչ ուղղեց պաղեստինեան ընդդիմադիր շարժումներու որդեգրելու երկխոսութեան ուղին եւ վերջ տալու Իրաքի թախաբանութեան:

Ապու Մապէն դիտել տուաւ, սակայն, որ իսկական խաղաղութիւնը կը հաստատուի այն պահուն, երբ Իրաքի պաղեստինեան հողերէն կը վերցնէ Իրէակըն քաղաքը: Ապպաս յայտարարեց, որ Իրաքի հապաքաւոր Իրէակըն կ'ապրեն պաղեստինեան հողերու վրայ, երէտք մը, որ կը դառնա պատուի եւ ապօրինի կը նկատուի միջազգային ընտանիքին կողմէ: Խօսքը ուղղելով Իրաքի ժողովուրդին, Ապու Մապէն ըսաւ. «Պէտք է ընտրութիւն կատարէք, մենք կը դառնալորտեք անէն ձեռի ահաբեկչութիւնը եւ բնակչութեան ձեռք կ'երկարեցնէք»:

Պաղեստինցի վարչապետը մերժեց խաղաղութեան ձամբու միջազգային քարտէք փոփոխութեան ենթակելու Իրաքի ինքնուրուագիւնը: Ան շեշտեց, որ քարտէք գործադրութեան դրուելու համար է եւ բնակչոյցի չէ: Իրաքի ապահովութեան հարցերու առնչուող վերապահութիւններ ու մտահոգութիւն յայտնած էր քարտէքի անփոփոխ կիրարկման մասին: Ապպաս դիտել տուաւ սակայն, որ պաղեստինցիները պատրաստ են վերցնելու իրենց քաղաքական ու ապահովական պատասխանատուութիւնը:

Պաղեստինցիներուն ուղղելով իրենց, Ապպաս խոստացաւ անմիջապէս ձեռնարկել փոստմութեան դէմ արշաւին, դառնական կառոյցին ու իշխանութեան անբարեխառն եւ օրէքի իշխանութեան հաստատման: «Կառավարութիւնը խիստ պիտի ըլլայ ունեւ մէկուն դէմ, որ օրէքը կը խախտէ», ըսաւ ան:

Պաղեստինցի երեսփոխաններուն մեծ մասը դրական հակադարձութիւն ունեցաւ Ապպասի ձառնիկի հանդէպ, իսկ աւելի ուշ խորհրդարանը վստահութեան քուն շարժեց անոր կառավարութեան:

ՀԱՄԱՍ ԿԸ ՄԵՐԾԷ ԱՊՊԱՍԻ «ԱՆՁՆԱՊԱՆԱԿԱՆ» ԿՈՉԸ

Արմատական Իսլամական Համաս շարժումը անմիջապէս հակադարձեց Ապպասի ձառնիկը, մերժելով յատկապէս ապօրինի վէնքերը հաւաքելու կոչը, վոր «անձնապաշտական» կը նկատէ: Համասի մէկ ղեկավարը ըսաւ, որ վէնքերը անհրաժեշտ են «Իսլամապաշտականութեան եւ հայրենիքի պաշտպանութեան համար»: Ան աւելցուց, որ Համաս կը մերժէ վէնքերը յանձնել, որովհետեւ բոլոր պաղեստինցիներուն կեանքը վտանգուած պիտի ըլլայ Իրաքի ահաբեկչութիւններու քաղաքականութեամբ: Իսլամական ղեկավարը աւելցուց, որ եթէ պաղեստինեան իշխանութիւնը պահանջէ վէնքերը, Համաս պիտի մերժէ եւ պաղեստինեան ապահովութիւնը պիտի վտանգուի:

Համասի հակադարձութեան համապօր կեցուածք մը արտայայտեց նաեւ Իսլամական Ժիադի շարժումը:

ԱՐԱՅԱԹ ԱԶՍԵ Է ՃԱՄԱՐՈՒՄԸ...

Իրաքի յաղաղութեան պաշտօնատար մը յայտնեց, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաթը Արաֆատը պատ է Ռամալլայէն դուրս գալու եւ արտասահման մեկնելու, սակայն անոր տունակը միայն երթի պիտի ըլլայ: Պաշտօնատարը աւելցուց, որ Արաֆատը աւելին պէտք չէ յուսալ: Ան շեշտեց նաեւ որ Իրաքի արտօնութիւն պիտի չտայ Արաֆատի շրջելու Այրլորդանանի եւ Կապայի մէջ, որ պիտի քաջալերէ ահաբեկչութիւնը: Պաշտօնատարը աւելցուց, որ եթէ Արաֆատը կ'ուզէ հետոնալ չլիբանոնեան պաղեստինցիներու հարցին մէջ, Իրաքի իրաքեան արձակեցիկները պիտի վրայ: Իրաքեան շարժումը մէջ ապահովութեան Է.Փ.Փ. Է. Փ.Փ. հետ կապ ունեցող ղեկավար մը եւ այլ հետեւորդ մը: Վեց վիրաւորները անցորդներ էին:

ԿՈՒՏԸՆ ԿՈՒՆԷՆ՝ ՍԻԼՎԸՐ ԿՈՒՆԷՆ...

Եու. Է. Է. Ֆ. Ա. ն երկէլ յայտնեց, թէ յառաջիկայ ամիս տեղի ունենալիք «Չելսի»ի մէջ Լիլիան Թիւրամի դէմ: Միւշ Տըսայի մրցաշարքէնու աւարտականի մրցումներին ընթացքին պիտի կիրարկուի «Ալիվըր-Կոլ»ի դրուութիւնը, փոխան՝ «Կոլտըն-Կոլ»ի:

Սիլվըր Կոլի դրուութեամբ, եթէ մրցումին առաջին երկարաձգման ընթացքին խումբ մը կոլ նշանակէ, մրցումը պիտի չ'աւարտուի, մինչեւ 15 վայրկեանը վերջանայ: Կոլ նշանակուելու պարագային, երկրորդ 15 վայրկեանը իսպալու կարիքը պիտի չ'զգացուի, որովհետեւ յաղ-

թական խումբը պիտի տիրանայ տիրուքին: «Սիլվըր-Կոլ»ի դրուութիւնը պարզապէս երկու խումբերուն պիտի չ'արժեքէ յաւելեալ 15 վայրկեան աւելի մրցիլ իրարու դէմ եւ ուրիշ ռիսկը:

Ինքնաբերաբար ինք սուլած կ'ըլլար մրցումին աւարտը, առանց սպասելու իրաւարարին սուլիչին: Նշենք, թէ «Ալիվըր-Կոլ»ի դրուութեան մէջ եւս եթէ երկու խումբերը 120 վայրկեանի ընթացքին չ'յաջողան կոլ նշանակել, դարձեալ պիտի դիմուի անխուսափելիին՝ փենալթիներուն:

